

**Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
(թարմացված)**

Երևան, ապրիլ 2018



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ.....	8
1.2. Ծրագրի այն բաղադրիչների նկարագրություն, որոնց համար հնարավոր է կատարվի հողի ձեռք բերում և վերաբնակեցում	9
1.3. Վերաբնակեցման քաղաքականության պատրաստման շրջանակի անհրաժեշտությունը (ՎԲՇ)	10
1.4. Վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքները և նպատակները.....	10
2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	12
2.1. Ինստիտուցիոնալ դաշտ	12
2.2. Հողի օտարման, նվիրատվության ու տիրապետման վերաբերյալ օրենսդրական դաշտ.....	16
2.3 Համաշխարհային բանկի՝ Հողի օտարմանն ու տարաբնակեցմանն առնչվող գործառնական պահանջների ստանդարտներ (ՕՔ 4.03)	22
2.5 ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի պարտադրված վերաբնակեցման քաղաքականության համեմատություն	28
2.6 Բացերի վերլուծություն	30
3. ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ.....	31
3.1. Իրավունակություն	31
3.2. Իրավունքի շրջանակ	31
3.2.1. Հող	32
3.2.2. Պետական և համայնքային հողեր	33
3.2.3. Այլ փոխհատուցումներ և նպաստներ.....	33
3.3. Ակտիվների գնահատման մեթոդները.....	34
4. ՎԳԾ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ	37
5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	39
5.1. ՎԳԾ իրականացման գործընթաց.....	39
5.2. Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմ.....	41
5.3. Մոնիտորինգ	45
6. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ	48
7. ԾԱԽՍԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ.....	50
8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	51
8.1. Իրավունքների և փոխհատուցումների մատրիցա.....	51
8.2. Մարդահամարի տեղեկատվության հարցաթերթիկ	55
8.3 Մարիկ 1 արևային կայանի համար Սոցիալական համալիր ստուգման ամփոփում	55
8.4 Մարդահամարի ձևանմուշ.....	Error! Bookmark not defined.

8.5	Կորուստների և գույքագրման ձևանմուշ	63
8.6	Հանրային քննարկումների և հրապարակման ծրագիր.....	64
8.6.1	Նկարագրություն.....	64
8.6.2	Հանրային քննարկումներ.....	64
8.6.3	Վերաբնակեցման հետ կապված փաստաթղթերի հրապարակումը	66
8.8	Հղումներ	75

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՇԿ	Շինարարության կապալառու
ՎԶՄԲ	Վերակառուցման զարգացման միջազգային բանկ
ԷՄԴ	Էլեկտրական և մագնիսական դաշտեր
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿԾ	Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագիր
ԲՄՄ	Բնապահպանական միջազգային միություն
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ԿՎ	Կիլովոլտ
ԿՎտժ	Կիլովատտ-ժամ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄՎտժ	Մեգավատտ-ժամ
ԷԵԲՊՆ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնականապաշարների նախարարություն
ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՄՆ	ՀՀ մշակույթի նախարարություն
ՏԿՏՏՆ	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ԱՄՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՕԳ	Օդային գիծ
ՀԾԿՀ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ԾԱԱ	Ծրագրի ազդակիր անձինք
ՖՄՌ	Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ
ՀՔՀԾ	Հանրային քննարկումների և հրապարակման ծրագիր
ՖԿ	Ֆոտովոլտայիկ կայան
ՀՎԷԷ	
հիմնադրամ	Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԳԾ	Վերաբնակեցման գործողությունների ծրագիր

ԱԳ	Անվտանգության գոտի
ՎԲՇ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
ՎԷ	Վերականգնվող էներգետիկա
ԱՄԱԷԾ	Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի
ՌԲԳ	Ռազմավարական բնապահպանական գնահատում
ՌԲՏ	Ռազմավարական բնապահպանական տեսչություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՄԱԶԲ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ներդրող՝ հզորության անկախ արտադրող, որը պատասխանատու է կայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման և շահագործման համար:

Համաշխարհային բանկի (Բանկ) տերմինաբանությամբ, վերաբնակեցում նշանակում է հողի՝ հարկադրաբար զբաղեցումից կամ հողօգտագործման սահմանափակումից, եկամտի աղբյուրի կամ ապրուստի միջոցների կորստից, տեղափոխումից, դեպի օրինականորեն սահմանված այգիները և պահպանվող տարածքները մուտքի սահմանափակումից առաջացող բոլոր տնտեսական և սոցիալական վնասները, ինչպես նաև դրանից բխող փոխհատուցման և մեղմացման միջոցառումները:

Ծրագրի ազդակիր անձինք (ԾԱԱ)՝ անձինք, ովքեր տուժում են ծրագրի ուղղակի տնտեսական և սոցիալական ազդեցությունից, որը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

- Ակտիվների կորուստ կամ վնասում,
- Պետական կարիքների համար հողի օտարում,
- Պարտադրված տեղահանում,
- ազդեցություն ձեռքբերված կամ սեփականություն հանդիսացող (ժամանակավոր կամ մշտական) ցանկացած բնակելի շինության, հողի (ներառյալ հողի վրա գտնվող շինությունները, գուղատնտեսական քանակության հողերը և արտավայրերը) կամ ցանկացած այլ հիմնական միջոցի նկատմամբ իրավունքների, սեփականության իրավունքի կամ այլ տնտեսական շահերի վրա:
- ազդեցություն արտադրական նշանակության ակտիվների հասանելիության վրա (ժամանակավոր կամ մշտական):
- ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության, աշխատանքի կամ բնակության վայրի վրա:

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը՝ վերաբնակեցումը կարգավորող փաստաթուղթ է, որը պատրաստվում է, երբ ծրագրի գնահատման փուլում վերաբնակեցման ծավալներն ու աշխարհագրական տեղանքները հստակ հայտնի չեն, քանի որ ծրագիրն ունի բազմաթիվ բաղադրիչներ կամ ծրագրի վերջնական նախագծի մշակումը (ինչպես որ այս դեպքում) ավարտվելու է ավելի ուշ (շինարարության փուլի աշխատանքային նախագծեր): Քաղաքականության շրջանակը սահմանում է ծրագրի իրագործման ընթացքում հնարավոր վերաբնակեցման գործողության նպատակներն ու սկզբունքները, կազմակերպական լուծումները և ֆինանսավորման մեխանիզմները: Շրջանակը նաև գնահատում է ծրագրի ազդեցության կրողների և վերաբնակեցումների հավանական թիվը, հատկապես ֆինանսական միջնորդություն ենթադրող ծրագրերում, և գնահատում հնարավոր վերաբնակեցման նախապատրաստման, իրականացման և վերահսկողության ինստիտուցիոնալ կարողությունները: Երբ ծրագրի իրականացման ընթացքում վերաբնակեցման չափերը հստակեցվում են, ապա մինչ ծրագրի ֆինանսավորման հաստատումը ՎԳԾ է պատրաստվում (ԳՔ 4.12, պարբ. 29–30):

Վերաբնակեցման գործողությունների ծրագիրը (ՎԳԾ)՝ կամ Հակիրճ Վերաբնակեցման գործողությունների ծրագիրը (ՀՎԳԾ) վերաբնակեցման փաստաթուղթ է, որը պատրաստվում է երբ հստակեցվում է ծրագրի աշխարհագրական դիրքը, այն է՝ հայտնի են էլեկտրահաղորդման գծի մանրամասն ծրագիծը և հենայունների հստակ դիրքերը: Եթե էլեկտրահաղորդման գծի վերջնական ծրագիծը չի բավարարում օրենքով սահմանված անվտանգության գոտու նվազագույն պահանջներին, ապա հողի ձեռքբերումը հանգեցնում է մարդկանց ֆիզիկական տեղահանման և/ կամ ապաստանի կորստի, և/կամ եկամտի աղբյուրի կորստի, և/կամ տնտեսական ռեսուրսների անհասանելի ության կամ հասանելիության սահմանափակման: ՎԳԾ-ն պատրաստում է մարդկանց կամ նրանց եկամուտների վրա ազդեցության սկզբնապատճառ հանդիսացող կողմը: ՎԳԾ-ն պարունակում է մանրամասն և իրավական տեսանկյունից պարտավորություն հանդիսացող պահանջներ, որին համաձայն պետք է կատարվի մարդկանց տեղահանումը և փոխհատուցումը մինչ բացասական հետևանքներ ունեցող միջոցառումների իրականացումը: ՎԳԾ-ն պարունակում է ծրագրի ազդեցությունը կրողների մարդահամարի արդյունքները, ներառյալ կադաստրային տեղեկատվություն և կորուստների մանրամասն ցուցակ:

Փոխհատուցում՝ վճարում հողի օտարման կամ այլ ակտիվների, ներառյալ հիմնական միջոցների, մասնակի կամ ամբողջական կորստի դիմաց, որը կատարվում է բնահրային, դրամական կամ այլ ակտիվներով փոխհատուցման եղանակով:

Հողի ձեռքբերում՝ հողի, շինությունների կամ դրա վրա գտվող այլ գույքի նկատմամբ ծրագրի իրականացման նպատակով իրավունքների ձեռքբերում կամ օտարում:

Փոխհատուցման արժեքը սահմանվում է հետևյալ կերպ՝ Գյուղատնտեսական նշանակության հողակտորների համար այն մինչև ծրագրի սկիզբը կամ տեղահանումը ունեցած (որը որ ավելի բարձր է) հավասար արտադրողական կամ օգտագործման ներուժով և ծրագրից տուժած հողակտորի մոտակայքում գտնվող այլ հողակտորի շուկայական արժեքն է գումարած՝ հողակտորի նախապատրաստման համար ծախսերը, որպեսզի այն ունենա նույն հատկանիշները, ինչ-որ ծրագրից տուժած հողակտորը: պետական գրանցման տուրքերն ու վճարները: (OP4.12: Հավելված A, ծանոթագրություն 1)

Վերջնաժամկետ՝ ծրագրի աշխարհագրական սահմաններում ծրագրի ազդակիր անձանց մարդահամարի մեկնարկման ամսաթիվ: Դա այն ամսաթիվն է, որից հետո հողամասի վրա որևէ բարեփոխումների կամ վերջինիս նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների դիմաց փոխհատուցում չի տրվում:

Խոցելի խմբեր՝ մարդիկ ովքեր չեն կարող համակերպվել ճգնաժամային կամ շոկային իրավիճակներին և պահպանել իրենց եկամտի աղբյուրը:

1. ՆԱԽԱԲԱՆ

1.1. Ծրագրի նկարագրությունը

Հայաստանում էլեկտրաէներգիան մատակարարվում է ատոմային կայանի (31%), գազով աշխատող ջերմաէլեկտրակայանների (28%) և հիդրոէլեկտրակայանների (41%) միջոցով: Չունենալով ածխաջրածնային պաշարներ Հայաստանը ներկրում է իրեն անհրաժեշտ գազի և միջուկային վառելիքի ամբողջ քանակությունը և դրանով իսկ խոցելի է էներգաանվտանգության և գների փոփոխականության առումով: Իր էներգաանվտանգության մակարդակը մեծացնելու համար Հայաստանը նախատեսել է մեծացնել տեղական ռեսուրսների օգտագործումով էլեկտրաէներգիայի արտադրության բաժինը: 2004թ.-ին ընդունված էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին օրենքի միջոցով Հայաստանի կառավարությունը խրախուսել է վերականգնվող էներգիայի օգտագործումը՝ նպատակ ունենալով վառելիքի դիվերսիֆիկացիայի միջոցով բարելավել էներգաանվտանգության մակարդակը, ապահովել էներգիայի մատչելիությունն ու հնարավորինս մեծացնել էներգիայի արտադրության նպատակով տեղական ռեսուրսների օգտագործումը: Փոքր հիդրոէլեկտրակայանների, հողմաէլեկտրակայանների և կենսազանգվածով աշխատող էլեկտրակայանների համար 2007թ.-ին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագները գրավիչ են եղել մասնավոր ներդրումներ ներգրավելու՝ ներառյալ 200 ՄՎտ ընդհանուր հզորությամբ նոր ՓՀԷԿ –եր կառուցելու գործում: <<<< էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի>> վերաբերյալ 2013թ.-ի Նախագահի կարգադրությունը, ինչպես նաև 2012-2025թթ.-ի համար ՀՀ կառավարության Ջարգացման ռազմավարությունը վերականգնվող էներգիան դիտում են որպես վճռորոշ գործոն էներգաանվտանգության մակարդակը բարձրացնելու գործում: Այնուամենայնիվ, բացի փոքր հիդրոէլեկտրակայաններից, որևէ այլ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներ նշանակալից չափով առայժմ չեն օգտագործվել՝ ֆինանսական և տեխնոլոգիական արգելքների պատճառով: Մասնավորապես, վերականգնվող էներգիայի ռեսուրսների գնահատումը, ինչպես օրինակ գերթերմալ, քամի և արևային, ինչպես նաև տեղանքում տվյալների մոնիտորինգը պահանջում են նշանակալից ռեսուրսների ու փորձի առկայություն: Արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտայիկ կայաններ երկրում դեռևս չկան:

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել Կլիմայի ներդրումային հիմնադրամի Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի (SREP) կողմից, որն իր հերթին կառավարվում է Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի կողմից՝ Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման գործընթացի համար: Դրամաշնորհի իրականացնող գործակալությունը Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության հիմնադրամն է (ՀՎԷԷ հիմնադրամ):

Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման գործընթացի շրջանակներում այժմ տեխնիկատնտեսական հիմնավորման և գործարքային խորհրդատվության ծրագիր է իրականացվել և գնահատվել է Հայաստանում բարձր արևային ճառագայթման ներուժ ունեցող տարածքներում վեց արևային ֆոտովոլտայիկ կայաններ

կառուցելու նախագծի կենսունակությունը՝ դիտելով այն որպես պետություն և մասնավոր հատվածների գործընկերության ծրագրեր:

Արևային ներուժի քարտեզագրման և տեղանքի ընտրման խորհրդատվության շրջանակներում իրականացված արևային էներգիայի ներուժի գնահատման հիման վրա առաջին փուլում ընտրվել է առաջին տեղանքը, որը ներկայացված է ստորև.

Տեղանքի անվանումը	Հզորությունը (ՄՎտ)	Էլեկտրահաղորդման գիծ	Գտնվելու վայրը (Մարզ, համայնք)
Մասրիկ 1	55.45	110 կՎ (5կմ)	Գեղարքունիք, Մեծ Մասրիկ

Կայանների համար ընտրված տեղանքները գտնվում են համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում և որևէ ֆիզիկական վերաբնակեցում չի ակնկալվում: Կայաններից դեպի ցանց գնացող օդային էլեկտրահաղորդման գծերը անցնելու են մեծամասամբ գյուղատնտեսական նշանակության հողերի վրայով: Օտարման գոտու հողերը մասնավոր և համայնքային սեփականություն են, որոնք օգտագործվում են գյուղատնտեսության, այգեգործության, արոտավայրի կամ անասնակերի համար:

Ակնկալվում է, որ Ծրագրի շրջանակներում որևէ անձ չի վերաբնակեցվելու:

1.2. Ծրագրի այն բաղադրիչների նկարագրություն, որոնց համար հնարավոր է կատարվի հողի ձեռք բերում և վերաբնակեցում

Մասրիկ 1 արևային կայանի կառուցում.

Արևային կայանը գտնվում է համայնքային հողի վրա, որը նվիրատվությամբ փոխանցվել է Ծրագրին: Առաջին տեղամասում կիրառված համայնքային հողերի նվիրատվության գործընթացի Սոցիալական համալիր ստուգում է իրականացվել՝ Մասրիկ 1 արևային կայանը գտնվելու է համայնքին պատկանող գյուղատնտեսական արոտավայրում (տես բաժին 1.4):

Մասրիկ 1, կայանը բաշխման ցանցին միացնող 110 կՎ ՕԳ-երի կառուցում

Հողերի ձեռք բերում կպահանջվի հողամասի և հողօգտագործման վրա մշտական ազդեցություն ունեցող բոլոր բաղադրիչների համար (հաշվի առնելով բարձրության սահմանափակումները):

Հողերի ձեռք բերում կպահանջվի միայն հենարանների հիմքերի կառուցման համար:

Փոխհատուցում կպահանջվի՝

- Ուսումնասիրության աշխատանքների ժամանակ բերքին/ծառերին հասցված վնասի դեպքում:
- Մոտեցման ճանապարհների կառուցման ժամանակ բերքը/հողամասը վնասելու դեպքում:
- Հենասյունների մոնտաժման նախապատրաստման և էլեկտրահաղորդման լարերի ձգման ժամանակ բերքի վնասման դեպքում:

- Ժամանակավոր մոտեցման ճանապարհների համար հողամասին հասցված վնասի դեպքում:

Անվտանգության գոտին կարող է օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով (հաշվի առնելով բարձրության սահմանափակումները) և որպես արտավայր, բացառությամբ այն հողամասերի որոնք հատկացված են հիմքերի տեղակայման համար:

Ծրագրի այլ բաղադրիչների համար՝ ՖՎ կայանների և 6/10կՎ ՕԳ-երի կառուցում, հողերի ձեռք բերում չի պահանջվի: Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է համապատասխան ԲՍԱԳ և ԲՍԿԾ հաշվետվություններում, ինչպես նաև Մասրիկ 1 արևային կայանի համար ԱՀԱՀ-ում (մանրամասների համար տես բաժին 1.4 և Հավելված 9.3):

1.3. Վերաբնակեցման քաղաքականության պատրաստման շրջանակի անհրաժեշտությունը (ՎԲՇ)

Ծրագրի այս փուլում հնարավոր չէ մշակել Վերաբնակեցման գործողությունների ծրագիր (ՎԳԾ), քանի որ էլեկտրամատակարարման գծի ծրագծի վերջնական նախագիծը դեռ պատրաստ չէ: Հենասյունների դիրքերը կամրագրվեն հողաչափման աշխատանքների ժամանակ, որոնք շինարարության կապալառուն պետք է իրականացնի շինարարական աշխատանքներից առաջ: Բացի այդ, նախատեսվում է որ ՖՎ կայանների կառուցման հետևանքով վերաբնակեցման անհրաժեշտություն չի լինի: Սույն ՎԲՇ-ն կազմվել է օժանդակելու Ներդրողին ՎԳԾ միջոցառումների իրականացմանը նախապատրաստվելու համար: Սույն փաստաթղթի նպատակն է՝ պարզաբանել ծրագրի շրջանակում պատրաստվող ենթածրագրերի նկատմամբ կիրառվող վերաբնակեցման սկզբունքները, կազմակերպական լուծումները և նախագծման չափանիշները: ՎԲՇ-ն պարունակում է կանոնակարգեր, որոնց հետագայում օգտագործվելու են ՎԳԾ համար: ՎԳԾ-ն կամ Հակիրճ ՎԳԾ-ն (ըստ անհրաժեշտության) հետագայում պետք է լրացվեն մանրակրկիտ հարցման արդյունքներով, ներառյալ կադաստրային տեղեկատվություն, կորուստների ցուցակ և ծրագրի ազդեցության կրողների ակտիվներ գրավում և խորհրդակցություն:

1.4. Վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքները և նպատակները

Համաձայն ԳՔ 4.12-ի՝ «հնարավորության դեպքում պետք է խուսափել պարտադրված տեղահանումից կամ այն պետք է հասցնել նվազագույնի՝ դիտարկելով ծրագրի այլ ընտրանքային նախագծման բոլոր կենսունակ տարբերակները» (պարագրաֆ 2ա): Քաղաքականության այս հիմնարար նպատակն արտահայտում է այն համոզմունքը, որ վերաբնակեցումը կարող է չափազանց վնասակար լինել մարդկանց և համայնքների համար: Հիմնականում քաղաքականությունը վերաբերվում է անմիջական տնտեսական ու սոցիալական ազդեցություններին, որոնք բխում են Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի պահանջներից և որոնց պատճառները հետևյալն են՝

- a) Հողերի հարկադիր ձեռքբերում, որը հանգեցնում է տարաբնակեցման կամ ապաստանի կորստի; գույքի կորուստ կամ դեպի գույքը մուտքի կորուստ; կամ

եկամուտի աղբյուրի կամ ապրուստի միջոցների կորուստ՝ անկախ այն հանգամանքից, թե ազդեցության ենթակա անձիք ստիպված են տեղափոխվել, թե՛ ոչ; կամ

- b) դեպի օրինականորեն սահմանված այգիները և պահպանվող տարածքները մուտքի սահմանափակում, որը հանգեցնում է բացասական ազդեցության տարաբնակեցված անձանց ապրուստի համար:

Տվյալ ծրագրի համար, հենարանների կառուցման համար անհրաժեշտ հողերի ձեռք բերումը հիմնական սոցիալական ազդեցությունն է, որի վրա կենտրոնացած է սույն ՎԲՇ հաշվետվությունը: ՕԳ-ների կառուցման համար կառուցվելու են միաշղթա 6/10 կՎ և երկշղթա 110 կՎ ՕԳ-եր, սակայն հողերի ձեռք բերում կպահանջվի միայն 110 կՎ ՕԳ-երի հենարանների համար: Վերաբնակեցման ազդեցությունները սահմանափակվելու են միայն հողի օտարմամբ ու փոխհատուցմամբ:

Ընդհանուր առմամբ ծրագիրը կունենա սահմանափակ ազդեցություն: Այնուամենայնիվ, պահանջներին համապատասխան անհրաժեշտ կլինի պատրաստել հակիրճ ՎԳԾ հաշվետվություն ՕԳ վերջնական նախագիծը մշակելուց հետո, եթե համալիր ստուգումը բացահայտի, որ հողի վրա առկա է ազդեցություն:

Ստորև ներկայացված են ծրագրի բաղադրիչների իրական ու հավանական ազդեցությունները.

Մասրիկ 1 ՖՎ կայան. Մասրիկ 1 ՖՎ կայանի կառուցման համար որևէ ֆիզիկական տարաբնակեցում չի պահանջվի, քանի որ այն գտնվելու է Մեծ Մասրիկ համայնքին պատկանող հողի վրա: Մեծ Մասրիկ համայնքը ցանկություն է հայտնել նվիրաբերել համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրը Հիմնադրամին՝ Մասրիկ 1 ՖՎ կայանի կառուցման նպատակով:

Այս առումով, Հիմնադրամի կողմից իրականացվել է սոցիալական անվտանգության համալիր ստուգում՝ հասկանալու ու գնահատելու համար հնարավոր սոցիալական ազդեցությունները և առաջարկելու համար ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ Մեծ Մասրիկում առաջարկվող արևային կայանի համար, որտեղ համայնքային արոտավայրը նվիրաբերվել է ՖՎ կայանի կառուցման նպատակով: Համալիր ստուգումը իրականացվել է համաձայն՝ հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ Համաշխարհային բանկի խնրի սոցիալական անվտանգության քաղաքականության (ՕՔ 4.03 և Իրականացման ստանդարտ 5).

Սոցիալական անվտանգության համալիր ստուգման շրջանակներում, հիմնվելով հավաքագրված տվյալների վրա, իրականացվել է հետևյալ վերլուծությունը.

- Ծրագրի բոլոր ազդեցությունների (դրական ու բացասական) վերլուծություն ու գնահատում
 - Կյանքի ստանդարտների ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա ակնկալվող ազդեցությունների վերլուծություն, հատկապես, որոնք վերաբերվում են անհատների ու համայնքի եկամուտներին, ապրուստին ու աշխատանքով ապահովմանը
 - Տարբեր խմբերի վրա ազդեցությունների ակնկալվող ծանրությունը
- Նվիրաբերված արոտավայրի արդյունավետության վերլուծություն՝ որոշելով բերքատվությունը և արածող կենդանիների ծավալները և այլընտրանքային արոտավայրերի առկայությունը

- Մեղմացնող միջոցառումների վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ և բացասական ազդեցությունները նվազեցնելու ու մեղմացնելու տարբերակներ (օրինակ՝ համայնքային արոտավայրերը ավելացնելու տարբերակներ)

Հողի կամավոր նվիրատվության վերաբերյալ սոցիալական անվտանգության համալիր ստուգման արդյունքում հիմնավորվել է հետևյալը՝

- Համայնքային հողի նվիրատվությունը չի հանգեցնում տնային տնտեսությունների տեղափոխմանը կամ չի առաջացնում վերջիններիս եկամուտների կամ ապրուստի միջոցների կորուստ

Ազդեցության ենթակա համայնքը իր պատրաստակամությունն է հայտնում նվիրաբերել ազդեցության ենթակա համայնքային հողերը ՀՀ-ին՝ Ծրագրի իրականացման համար, ինչը փաստագրված է հանրային լուսմաների հանդիպումների արձանագրության մեջ: ՕԳ-երի հենարանների համար կպահանջվի հողերի ձեռք բերում, քանի որ նախատեսվում է 110 կՎ ՕԳ-եր (ավելի մեծ հենարաններ են օգտագործվում, քան 6/10 կՎ-ի համար) և հողամասերի վրա ազդեցությունը ավելի մեծ է: Կայանները պահանջվող հզորություն ունեցող ենթակայանին միացնող ՕԳ-երը անցնում են մասնավոր գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողամասերի վրայով: Բնակեցված տարածքների հետ փոխհատման ռիսկը բացակայում է, սակայն մասնավոր հողամասերի հետ փոխհատումից խուսափել հնարավոր չէ, քանի որ տեղամասերի և ենթակայանների միջև հողամասերը մշակվում են: Այնուամենայնիվ, վերջնական նախագիծը դեռ պատրաստ չէ և հնարավոր չէ հաստատել այս գնահատականը:

Անվտանգության գոտին կարող է օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով (հաշվի առնելով բարձրության սահմանափակումները) և որպես արոտավայր, բացառությամբ այն հողամասերի որոնք հատկացված են հիմքերի տեղակայման համար:

2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2.1. Ինստիտուցիոնալ դաշտ

Իրականացնող Գործակալությունը՝ R2E2 հիմնադրամը պատասխանատու է ամբողջ Ծրագրի իրականացման մոտիտորինգի համար: Սա կպահանջի Հիմնադրամի աշխատակազմում սոցիալական և բնապահպանական մասնագետների ներգրավում: R2E2-ը ներկայացնելու է թարմացված ՎԲՇ ընտրված Ներդրողին՝ որպես ուղեցույց հետագա ՎԳԾ-ի նախապատրաստման համար:

Ներդրող. Ներդրողը ներգրավելու է որակավորված բնապահպանական և սոցիալական անվտանգության մասնագետների, որոնք պետք է իրականացնեն ԲՍԿԾ, և պատրաստեն (Հակիրճ) Վերաբնակեցման գործողությունների ծրագիրը (ՎԳԾ) (այսինքն՝ մարդահամար, կորուստների մանրակրկիտ գույքագրում, սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն, հանրային քննարկումների գնահատում և հրապարակում, և այլն): Աշխատանքները կարող են իրականացվել Ներդրող ուժերով՝ խորհրդատուների աջակցությամբ նաև ՎԳԾ իրականացման հարցում:

Ներդրողը պատասխանատու է՝

- ,
- Ապահովել, որ մեղմացնող միջոցառումները նվազեցնեն մանրամասն նախագծման և ծրագրի ողջ իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները
- Իրականացնեն և փաստաթղթավորել ստուգման ընթացքը
- ՎԳԾ/ՀՎԲԾ պատրաստում՝ անհրաժեշտության դեպքում հիմնվելով թարմացված ՎԲՇ-ի դրույթների վրա,
- ՎԳԾ/ՎԲՇ իրականացում՝ հաշվի առնելով ազդեցությունները և փոփոխությունները որոնք ի հայտ կգան նախաշինարարական և շինարարական փուլերում՝ կապված դժգոհությունների հետ և փոխհատուցումների վճարման հանգեցնող, շինարարության համապատասխան ժամանակահատվածում իրականացում (այնպես, որ նվազեցվի ազդեցությունը մշակաբույսերի վրա)՝ ի լրումն ԲՍԿԾ-ի իրականացմանը և այլն:
- Ստեղծել, իրականացնել և կառավարել բողոքների լուծման մեխանիզմը. Խոցելի ԾԱԱ-երին իրավաբանական աջակցության ցուցաբերում ՀԿ-երի (Օրհուսի կենտրոն)/ անկախ իրավաբանի օգնությամբ:
- Շարունակական հանրային քննարկումների անցկացում մինչև և շինարարության ընթացքում:

Տեղական կառավարման մարմինները

- Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի Կադաստրի տեղական գրասենյակները,
- Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի բնապահպանական վարչությունները,
- Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի հուշարձանների պահպանման վարչությունները:

Այլ շահագրգիռ կողմեր

ՀՀ պետական և հանրային ոլորտի այլ շահագրգիռ կողմերի թվին են դասվում՝

ՀՀ Կառավարության հիմնարկներ՝

- Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը,
- ՀՀ բնապահպանության նախարարություն,
- ՀՀ ԲՆ պահպանվող տարածքների վարչություն,
- ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը,
- ՀՀ ԳՆ «Հայանտառ» ՊՈԱԿ,
- ՀՀ մշակույթի նախարարություն,
- ՀՀ ՄՆ Մշակութային ժառանգության վարչություն,
- ՀՀ ՄՆ Հուշարձանների պահպանության վարչություն,

- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (Կադաստր):

ՀԿ-ներ

- Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն,
- Կանանց ռեսուրսների կենտրոն,
- Բարձրագույն կրթությամբ կանանց ասոցիացիա,
- «Բիոսոֆիա» առողջապահության, բնապահպանության և գյուղատնտեսության զարգացման կենտրոն ՀԿ,
- «Բուրգ» երիտասարդական բնապահպանական կենտրոն
- «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ:

Ներգրավված ՀԿ-ների ցանկը կթարմացվի ՎՔՇ-ի պարաստման ու իրականացման ընթացքում

Վերոնշյալ պետական մարմինների և հասարակական կազմակերպություններին խորհրդատվություն է տրամադրվել ԲՍԱԳ/ՎՔՇ վերաբերյալ:

Գլխավոր իրականացնողների ու շահագրգիռների մատրիցա:

ՀՀ.	Իրականացնող/Շահագրգիռ անձ	Դերը / Պատասխանատվությունը
Իրականացնողներ		
1	Իրականացնող Գործակալությունը	- R2E2 հիմնադրամը պատասխանատու է ամբողջ Ծրագրի իրականացման մոտիտորինգի և ՀԲ հաշվետվություններ ներկայացնելու համար:
2	Ներդրող (կամ ՇԿ, եթե է Ներդրողը ՇԿ-ին լիազորում է ՎՔՇ-ի պատրաստման պարտավորությունը)	- ՎԳԾ/ՎՔՇ իրականացում՝ հաշվի առնելով ազդեցությունները և փոփոխությունները որոնք ի հայտ կգան նախաշինարարական և շինարարական փուլերում՝ կապված դժգոհությունների հետ և փոխհատուցումների վճարման հանգեցնող, շինարարության համապատասխան ժամանակահատվածում իրականացում (այնպես, որ նվազեցվի ազդեցությունը մշակաբույսերի վրա)՝ ի լրումն ԲՍԱԳ-ի իրականացմանը և այլն: (ՎԳԾ պատրաստման և իրականացման պատասխանատվությունը կարող է պատվիրակվել փորձառու խորհրդատուի), - Բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ) իրականացում, Աշխատակազմի ներկայացուցիչ, ով պատասխանատու է բողոքների լուծման ընթացակարգի համար, և ով տեխնիկական աջակցություն է ցուցաբերելու Ներդրողին ՎՔՇ-ի պատրաստման ու իրականացման ընթացքում ի հայտ եկած որևէ բողոքի համար (անձը պետք է ունենա 3 տարվա կամ ավել նմանատիպ աշխատանքային փորձ, իրավական կամ սոցիալական դաշտում բակալավրի կամ մագիստրոսի դիպլոմ) - Շարունակական հանրային քննարկումների անցկացում մինչև և շինարարության ընթացքում: - Եթե մարդահամարի արդյունքում հայտնաբերվում են խոցելի ազդակիր անձիք, ապա ՇԿ-ը պետք է նշանակի մասնագետների (սոցիալական աշխատողներ/ իրավաբաններ), ովքեր կաջակցեն այդ անձանց որջ գործընթացի ընթացքում, և ովքեր կգործեն

ՀՀ.	Իրականացնող/Շահագրգիռ անձ	Դերը / Պատասխանատվությունը
Իրականացնողներ		
		<p>որպես անկախ պաշտպաններ վերջիններիս համար որևէ բողոքի դեպքում:</p> <ul style="list-style-type: none"> - ՎՔՇ-ի պատրաստման ու իրականացման կարգավիճակի մասին մոնիտորինգ հաշվետվությունների մշակում, ներառյալ՝ ի հայտ եկած ցանկացած բողոքներ և դրանց լուծման ձևերը:
Շահառուներ		
4	Արտաքին մոնիտորինգի խորհրդատու, անհրաժեշտության դեպքում, որին վարձելու է Ներդրողը	<ul style="list-style-type: none"> - ՎԳԾ իրականացման մոնիտորինգ, - Փոխհատուցումների, վերաբնակեցման փաթեթների վճարման և Բողոքների լուծման մեխանիզմի շրջանակներում բողոքների կառավարման մոնիտորինգ, - Որոշել ՎԳԾ և ՎՔՇ դրույթների խախտման և անհամապատասխանության դեպքերը, - ՎԳԾ համապատասխանության հաշվետվության պատրաստում:
5	ՀՀ բնապահպանության նախարարություն/բնապահպանական տեսչություն	Շինարարական աշխատանքների բնապահպանական հսկողություն
6	ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ	Բնապահպանական փորձաքննության անցկացում և եզրակացության տրամադրում
7	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը	Կառավարման խորհրդի անդամ
8	ՀՀ ֆինանսների նախարարություն	Տրամադրում է միջոցներ ՀՀ-ի անունից
9	ՀՀ մշակույթի նախարարության պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գործակալություն	Աշխատում է նախագծող թիմի հետ հուշարձանների և մշակութային ժառանգության օբյեկտների շրջանցումը ապահովելու նպատակով
10	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (Կադաստր):	Պատասխանատու է անշարժ գույքի սեփականության կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար, ինչպես նաև անշարժ գույքի հանդեպ իրավունքների պետական գրանցման համար:
11	Դատարաններ	Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դատական դեպքերի քննություն և օտարման գնի որոշում:
12	Անկախ գնահատող	Լիցենզավորված մասնավոր ընկերություն, որը պետք է վարձվի ազդակիր գույքը գնահատելու համար:
13	Ազդակիր համայնքի ղեկավար	Աջակցել նախագծող թիմին մասնավոր հողամասերը շրջանցելու նպատակով

ՀՀ.	Իրականացնող/Շահագրգիռ անձ	Դերը / Պատասխանատվությունը
Իրականացնողներ		
14	ՀԿ-եր (i.e. WWF, Սոցիալական և բնապահպանական միություններ, տարածքային ՀԿ-եր, Օրիուս կենտրոն)	ԾԱԱ շահերի պաշտպանության և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործողություններ: Մասնակցություն հանրային քննարկումներին:
15	Կանանց կազմակերպություններ/ Կանանց տարածքային խորհուրդ	ՎԳԾ վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում և աջակցություն կանանց կողմից ղեկավարվող խոցելի տնային տնտեսություններին:
16	Հասարակական գործիչներ/իրավախորհրդատուներ	Աջակցություն խոցելի տնային տնտեսություններին/ աջակցություն անօրինական հողօգտագործողներին օրինականացման հարցում:
17	ՄՖԿ (ՀԲ)	Անվտանգության պահանջների պահպանման մոնիտորինգ, Ծրագրի վերահսկողություն, ՎԳԾ և ՎԲԾ իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվառությունների դիտարկում, ծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի վերաբերյալ թույլտվության տրամադրում:

2.2. Հողի օտարման, նվիրատվության ու տիրապետման վերաբերյալ օրենսդրական դաշտ

Ծրագրերի իրականացման համար հողերի ձեռքբերման հիմնական տարբերակները ներկայացված են ստորև.

Հողի կամավոր նվիրատություն (ՀԿՆ). Համայնքները կամ անհատները կարող են համաձայնվել ծրագրերին կամավոր տրամադրել հողերը՝ ի շահ համայնքի: ՀԿՆ-ի գործնական սկզբունքներն են՝ “տեղեկցված համաձայնությունն ու ընտրության ուժը”:

Հողի օտարում՝ համաձայնեցված պայմաններով. Անհատները կարող են համաձայնվել ծրագրին փոխանցել հողի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը որոշ պայմաններով, ինչպիսին են՝ փոխհատուցումը նմանատիպ հողով կամ դրամային փոխհատուցումը:

Հողի օտարում. Անհատ սեփականատերերից, օրենքով սահմանված կարգով, Կառավարության կողմից հողի օտարում հանրային նպատակներով՝ վճարելով կառավարությամբ սահմանված փոխհատուցում, որը համապատասխանում է սեփականատիրոջ կորուստներին, որը նա կրում է իր հողը տվյալ մարմնին զիջելով:¹

ՀՀ օրենսդրությունը մի քանի իրավական տարբերակ է ապահովում հողի օտարման, նվիրատվության ու սեփականության առումով: Դրանք են՝

ՀՀ հողային օերսնգիրք:

Հողային օրենսգիրքը հանդիսանում է ՀՀ-ում հողային հարցերը կարգավորող հիմնական շրջանակը: Այն սահմանում է պետական հողերի՝ տարբեր նշանակության օգտագործման ու

¹ “Կամավոր տարաբնակեցման” մասին ՀԲ ուղեցույցը սահմանափակված է OP 4.12-ում և Բանկի՝ *Հարկադիր տարաբնակեցման մասին աղբյուրով (2004թ.)*.

տնօրինման ուղղությունները, ինչպիսին են՝ գյուղատնտեսական, քաղաքաշինական, արդյունաբերական և հանքարդյունաբերական, էներգարտադրության, հաղորդալարերի, տրանսպորտային և այլ նշանակության: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, անմիջականորեն կամ իրավասու մարմինների միջոցով, իրականացնում է ՀՀ հողային ռեսուրսների պետական կառավարումը: Հողային օրենսգիրքը կանոնակարգում է հողակտորների բաշխումը, փոխանցումը և վաճառքը, սահմանում է հողի նկատմամբ սեփականության և այլ իրավունքները: Այն նկարագրում է տարբեր պետական մարմինների (համայնք, պետություն) պատասխանատվությունները հողի կառավարման հարցում; հողի սեփականատիրոջ, օգտագործողի, վարձակալողի կամ տիրապետողի իրավունքներն ու պարտավորությունները; հողի կատեգորիայի տեսակները, հողի օտարումը և փոխհատուցումը, հողային վեճերի լուծումը և հողի պաշտպանությունը: Հողային օրենսգիրքը նաև սահմանում է հողակտորի նկատմամբ իրավունքների դադարեցման, պետական կամ հանրային կարիքների համար հողի օտարման պայմանները, հողային օբյեկտի օբյեկտի խախտման հետևանքով հողակտորի բռնագրավման պայմանները:

Հողամասերի նվիրատվությունը: Հողերի նվիրատվության պայմանները սահմանված են Հողային օրենսգրքի երկու հոդվածներով.

- Հողային օրենսգրքի Հոդված 89 (**“Հողամասերի նվիրատվությունը ”**) սահմանում է հետևյալը.
 1. Հողամասի սեփականատերն իրավունք ունի հողամասը կամ դրա բաժանելի մասը նվիրատվության պայմանագրով փոխանցել քաղաքացուն, իրավաբանական անձին, ինչպես նաև պետությանը կամ համայնքներին:
 2. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հրաժարվել նվիրատվության կարգով պետությանը կամ համայնքներին անցնող հողամասերից, բացառությամբ մարդկանց կյանքի ու առողջության համար վտանգ սպառնացող կամ հողամասերի շուկայական գինը գերազանցող պարտքերով ծանրաբեռնված հողամասերի նվիրատվության դեպքերի:
 3. Հողամասերի նվիրատվության ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով:
- **ՀՀ հողային օրենսգիրք՝** համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6 մասի՝ Պետության սեփականություն հանդիսացող հողամասերը կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ, նվիրաբերության պայմանագրով անհատուց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Կառավարության համապատասխան որոշման մեջ և նվիրաբերության պայմանագրում պետք է սահմանվեն հողամասի օգտագործման նպատակներն ու պայմանները:

Հողամասի սերվիտուտը. Հողամասի սերվիտուտը մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքն է: Հողամասի սեփականատերն իրավունք ունի

պահանջել, որ իրեն սերվիտուտ տրամադրվի հողամասը պահպանելու և սպասարկելու համար: Տեղափոխված հաղորդուղիների սպասարկման դեպքում սերվիտուտը պետք է սահմանվի պայմանագրով (կամավոր) կամ դատարանի միջոցով (հարկադիր)՝ համաձայն Հողային օրենսգրքի հոդված 50-ի կետ 3-ի: Հողի օտարում չի պահանջվում՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են օրենսդրությամբ և հիմնականում վերաբերվում են տեղադրված հաղորդուղու հարևանությամբ գտնվող հողի/կառույցի օգտագործման սահմանափակմանը (օրինակ՝ բնակելի տան մոտ անցնող բարձրավորտ լարերի դեպքում)²:

Հողային օրենսգրքի հոդված 50-ի կետ ձ-ի համաձայն ժամանակավոր կամ ղմշտական սերվիտուտ կարելի է վերցնել ցանկացած հողի համար: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի կետ 5-ում նշվում է, որ սերվիտուտը պետք է հնարավորին չափ նվազ ծանրաբեռնի հողամասը (սերվիտուտի ազդեցությունը պետք է նվազագույն լինի): Սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատերն իրավունք ունի վճար պահանջել այն անձանցից, ի շահ որոնց սահմանվել է սերվիտուտը, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ: Սերվիտուտները ենթակա են պետական գրանցման (կետ 6): Սերվիտուտը պահպանվում է հողամասը մեկ անձից մյուսին անցնելիս (կետ 7):

Հոդված 50-ում նաև սահմանված է, որ սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատիրոջ պահանջով սերվիտուտը կարող է դադարեցվել դրա հիմքերի վերացման կամ հողամասի նպատակային նշանակության փոփոխման կապակցությամբ

Եթե սերվիտուտով ծանրաբեռնվելու արդյունքում հողամասը չի կարող օգտագործվել իր նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան, սեփականատերն իրավունք ունի դատական կարգով պահանջել դադարեցնել սերվիտուտը կամ փոփոխել նպատակային նշանակությունը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Հոդված 605-ը սահմանում է Նվիրաբերության ընդհանուր պայմանները, որոնք հետոյալն են.

- 1) Նվիրաբերություն է ճանաչվում գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով:
 - a. Նվիրաբերություններ կարող են արվել քաղաքացիներին, բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ

² Հայաստանում հաղորդալարերի կառուցման ու շահագործման համար գործում են մի քանի իրավական նորմեր ու կանոնակարգեր, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության որոշում N 961-Ն առ 12.07.2007թ., որով սահմանվում են հաղորդալարերի նախագծման, կառուցման ու շահագործման ստանդարտներն ու ուղեցույցերը, ինչպես նաև հաղորդալարերի համար մշտական ու ժամանակավոր օտարումների վերաբերյալ պահանջները, իսկ ՀՀ Կառավարության որոշում N 363-Ն առ 02.04.2009թ. ներկայացնում է էլեկտրալարերի համար անվտանգության գոտիների համար տեխնիկական կարգավորումները:

հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև պետությանն ու համայնքներին:

- 2) Նվիրաբերությունն ընդունելու համար որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում:
- 3) Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը քաղաքացուն պետք է պայմանավորված լինի, իսկ իրավաբանական անձանց՝ կարող է պայմանավորված լինել այն որոշակի նշանակությամբ օգտագործելով: Այդպիսի պայմանի բացակայության դեպքում քաղաքացուն կատարված նվիրաբերությունը համարվում է սովորական նվիրատվություն: Մնացած դեպքերում նվիրաբերված գույքը նվիրառուն պետք է օգտագործի դրա նշանակությանը համապատասխան:
- 4) Նվիրաբերությունը որոշակի նպատակով օգտագործելու համար ընդունած իրավաբանական անձը, պետք է վարի նվիրաբերված գույքի օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվարկ:
- 5) Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված գույքի օգտագործումը նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն նվիրաբերողի համաձայնությամբ, իսկ նվիրաբերող քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով:
- 6) Եթե նվիրաբերություն ստացողը նվիրաբերած գույքն օգտագործել է նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա նվիրաբերողը, նրա ժառանգները կամ այլ իրավահաջորդն իրավունք ունեն պահանջել նվիրաբերության վերացում:
- 7) Նվիրաբերության նկատմամբ չի կիրառվում սույն օրենսգրքի 604 հոդվածը³:

Հողի օտարում/էքսպրոպրիացիա

ՀՀ-ում հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական կատերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5 մասի՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Սեփականության օտարման համար սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են՝

- սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով
- միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ

³ Հոդված 604 սահմանում է “իրավահաջորդությունը նվիրատվություն խոստանալու” դեպքում պայմանները մասնավորապես՝ 1. Նվիրառուի, ում նվիրատվության պայմանագրով խոստացվել է նվեր, իրավունքները չեն փոխանցվում նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով 2. Նվիրատվություն խոստացած նվիրատուի պարտականությունները փոխանցվում են նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին»

ՀՀ օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացության և դրա որոշման կարգը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն): Սույն օրենքը չի տարածվում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, արտակարգ իրավիճակների պայմաններում սեփականության օտարման հարաբերությունների վրա:

Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝ պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը; էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը; շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

Մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման ընդունումը ձեռքբերողն իրավունք ունի կառավարությանն առաջարկություն ներկայացնելու օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրման մասին: Այս տարբերակի ընտրության դեպքում ձեռքբերողը պետք է սեփականության ուսումնասիրման վերաբերյալ դիմում ներկայացնի ՀՀ կառավարությանը: Եթե կառավարությունը համարի, որ տրամադրված տեղեկատվությունը բավարար է (Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս), ապա նախնական ուսումնասիրության մասին որոշումը ընդունվում է:

Օտարման ենթակա սեփականության ուսումնասիրման մասին կառավարության որոշումը պետք է ներառի Օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև՝

- ուսումնասիրման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտների հասցեները կամ գտնվելու վայրը.
- ուսումնասիրության ժամկետը, որը չի կարող ավելի լինել երկու ամսից՝ սկսած ուսումնասիրման մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից.
- ուսումնասիրության ընթացքում կատարվելիք գործողությունները.
- այլ անհրաժեշտ տվյալներ:

Կառավարության որոշմամբ կարող է նախատեսվել ուսումնասիրության հետևանքով սեփականատիրոջը պատճառվելիք վնասները ձեռքբերողի կողմից մասնակի նախնական փոխհատուցման պարտավորություն:

Նախնական ուսումնասիրությունից հետո (կախված արդյունքներից) կամ առանց դրա ձեռքբերողը կարող է գրավոր դիմել ՀՀ կառավարությանը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման նպատակով: Հաշվի առնելով ձեռքբերողի կողմից տրամադրված տեղեկատվությունը (Օրենքի 6-րդ հոդվածի 4 մասին համապատասխան) ՀՀ կառավարությունը կարող է ընդունել որոշում՝ Ծրագրի իրականացումը ճանաչելով բացառիկ՝ գերակա հանրային շահ:

Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ նշվում են՝

- այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը.
- օտարվող սեփականության ձեռքբերողը.
- օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները (հասցեները կամ գտնվելու վայրը կամ այլ տվյալներ, որոնցով տվյալ սեփականությունը տարբերվում է այլ սեփականությունից).
- սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը: Սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնական ժամկետը չի կարող մեկ տարուց, իսկ անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների դեպքում հինգ տարուց ավելի սահմանվել՝ սկսած բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից.
- տվյալ օտարման գործառույթների իրականացումը համակարգող, իսկ եթե ձեռքբերողը պետությունն է, ապա նաև սեփականության օտարման գործառույթների իրականացման համար պատասխանատու պետական մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին).
- այլ անհրաժեշտ տվյալներ:

Ձեռքբերողը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմանը կցվում է համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմնի և ձեռքբերողի միջև կնքված պայմանագիրը, որով սահմանվում են սեփականության օտարման գործընթացի ընթացքում պետության և ձեռքբերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը: Այդ պայմանագիրն ուժի մեջ է մտնում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2005թ.-ին: Սույն օրենքը սահմանում է անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում անշարժ գույքի գնահատման գործունեության հետ կապված հարաբերությունները: Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է անշարժ գույքի գնահատման օբյեկտները:

Համաձայն օրենքի 8-րդ հոդվածի՝ անշարժ գույքի գնահատումը պարտադիր է՝

- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական գույքի մասնավորեցման և պետական կամ համայնքային հողերի օտարման դեպքերի.
- անշարժ գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում.
- անշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում.
- անշարժ գույքի բռնագանձման հետևանքով իրացման դեպքերում.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Անշարժ գույքի գնահատման գործունեությունն եթակա է լիցենզավորման (հոդված 9): Անշարժ գույքի գնահատման գործունեությունն իրականացվում է իրաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ ըստ ՀՀ «Լիցենզավորման մասին» օրենքի պահանջների անշարժ գույքի գնահատման լիցենզիա ստանալուց հետո:

2.3 Համաշխարհային բանկի՝ Հողի օտարմանն ու տարաբնակեցմանն առնչվող գործառնական պահանջների ստանդարտներ (OP 4.03)

OP 4.03-ը սահմանում է այն հանգամանքները, որոնց ներքո ՀԲ-ի գործառնական պահանջների ստանդարտները կարող են կիրառվել, ներկայացնում է Ծրագիրն իրականացնող Մասնավոր անձի (այս դեպքում՝ Ներդրող) ու Բանկի դերն ու պատասխանատվությունը՝ ապահովելով ծրագրի բնապահպանական ու սոցիալական կայունության ասպեկտները: ՖՊ ստանդարտ 5-ը սահմանում է այն ստանդարտները, որոնք առնչվում են հողի օտարմանն ու տարաբնակեցմանը՝ համաձայն Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականության («ՀԲ Անվտանգության քաղաքականություն»):

ՖՊ ստանդարտ 5-ը ճանաչում է, որ ծրագրին առնչվող հողի օտարումն ու հողի օգտագործման սահմանափակումները կարող են բացասական ազդեցություններ ունենալ համայնքների ու հողօգտագործողների վրա: Հարկադիր տարաբնակեցումը վերաբերվում է ինչպես ֆիզիկական տեղափոխման (ապաստանի տեղափոխում կամ կորուստ), այնպես էլ՝ տնտեսական տեղափոխման (գույքի կորուստ կամ մուտքի հնարավորության կորուստ դեպի գույք կամ եկամուտների աղբյուր կամ ապրուստի այլ միջոցներ), որոնք ծրագրին առնչվող հողի օտարման և/կամ հողօգտագործման սահմանափակման արդյունք են: Տարաբնակեցումը հարկադիր է համարվում, երբ ազդեցության ենթակա անձիք կամ համայնքները իրավունք չունեն հրաժարվել հողի օտարումից կամ հողի օգտագործման սահմանափակումներից, որը հանգեցնում է ֆիզիկական ու տնտեսական տեղափոխման: Դա տեղի է ունենում հետևյալ դեպքերում՝ (i) օրինական էքսպրոպրիացիա կամ հողի օգտագործման ժամանակավոր կամ մշտական սահմանափակումներ, և (ii) բանակցային կարգավորումներ, որտեղ գնորդը կարող է դիմել էքսպրոպրիացիայի կամ հողի օգտագործման վրա իրավական սահմանափակումներ պարտադրել, եթե վաճառողի հետ բանակցությունները ձախողվում են:

Էքսպրոպրիացիայից խուսափելու ու տեղափոխումը պարտադրելու կառավարության իրավասության կիրառման անհրաժեշտությունից խուսափելու համար՝ պատվիրատուներին

խրախուսում են օգտվել բանակցային կարգավորումներից, որոնք համապատասխանում են սույն Ստանդարտի պահանջներին, նույնիսկ եթե նրանք իրավական միջոցներ ունեն օտարել հողը առանց վաճառողի համաձայնության:

Սույն Ստանդարտը կիրառվում է ֆիզիկական և/կամ տնտեսական տեղափոխման համար, որը բխում է հետևյալ գործարքներից.

- ✓ Հողի նկատմամբ իրավունքների կամ հողի օգտագործման իրավունքների ձեռքբերում էքսպրոպրիացիայի միջոցով կամ այլ պարտադիր ընթացակարգերի միջոցով՝ տվյալ երկրի իրավական համակարգին համապատասխան;
- ✓ Հողի նկատմամբ իրավունքների կամ հողի օգտագործման իրավունքների ձեռքբերում սեփականատերերի կամ հողի նկատմամբ իրավունքներ ունեցողների հետ բանակցային կարգավորումների միջոցով, եթե կարգավորման հասնելու ձախողումը հանգեցրել է էքսպրոպրիացիայի կամ այլ հարկադիր ընթացակարգերի⁴;
- ✓ Ծրագրի այնպիսի պայմաններ, երբ հողի օգտագործման կամ բնական ռեսուրսներին մուտք գործելու հնարավորությունների հարկադիր սահմանափակումները հանգեցնում են համայնքին կամ դրա մի խմբին կորցնել ռեսուրսի օգտագործման հնարավորությունը՝ անկախ նրանից, թե նրանք ունեն ավանդական կամ ճանաչման ենթակա օգտագործման իրավունքներ⁵;
- ✓ Ծրագրի այնպիսի դեպքեր, երբ պահանջվում է վտարել առանց պաշտոնական, ավանդական կամ ճանաչման ենթակա օգտագործման իրավունք ունեցող հողը զբաղեցնող անձանց⁶; կամ
- ✓ Հողի օգտագործման կամ այլ ռեսուրսների օգտագործման սահմանափակումներ, ներառյալ՝ համայնքային սեփականությունը և բնական ռեսուրսները, ինչպիսին են՝ ծովային ու ջրային ռեսուրսները, փայտանյութի համար և ոչ այդ նպատակով օգտագործվող անտառային ռեսուրսները, քաղցրահամ ջուրը, դեղաբույսերը, որսատեղիները, արոտավայրերն ու խոտածածկ տարածքները⁷:

Այն դեպքերում, երբ հողի, գույքի կամ դեպի գույք տանող մուտքերի վրա ծրագրի ազդեցությունները զգալի բասացական են դառնում ծրագրի ցանկացած փուլում,

⁴ Սա նաև վերաբերվում է ավանդական ճանաչված կամ ճանաչման ենթակա իրավունքներին՝ համաձայն տվյալ երկրի օրենքների: Բանակցությունները կարող են իրականացվել կառավարության կողմից կամ ընկերության կողմից (որոշ դեպքերում որպես կառավարության գործակալ):

⁵ Նման դեպքերում ազդեցության ենթակա անձիք հաճախ չեն ունենում պաշտոնական սեփականության իրավունք: Դա ներառում է քաղցրահամ ջրերը կամ ծովային միջավայրը: Սույն Ստանդարտը կարող է նաև կիրառվել, երբ ծրագրին առնչվող կենսաբազմազանության տարածքները կամ օրենքով սահմանված բուֆերային գոտիները հաստատված, սակայն ձեռքբերված չեն պատվիրատուի կողմից:

⁶ Չնայած որոշ մարդիկ կարող են չունենալ իրավունքներ այն հողերի նկատմամբ, որոնք նանք զբաղեցնում են, սույն Ստանդարտը պահանջում է, որ ոչ հողային գույքը պահվի, տեղափոխվի կամ փոխհատուցվի: Տեղափոխությունը կատարվում է սեփականության անվտանգությամբ, իսկ կորցված ապրուստի միջոցները վերականգնվում են:

⁷ Սույն Ստանդարտում նշված բնական ռեսուրսների գույքը համապատասխանում է էկոհամակարգերի ապահովման ծառայություններին, ինչպես նկարագրված է Ստանդարտ 6-ում:

պատվիրատուն պետք է հաշվի առնի Գործառնական պահանջների ստանդարտի դրույթների կիրառումը, նույնիսկ, երբ հողի օտարում կամ տարաբնակեցում ներառված չէ:

Գործառնական պահանջների ստանդարտ 5-ը չի կիրառվում հողի կամավոր գործարքներից բխող տարաբնակեցման դեպքում (այսինքն՝ շուկայական գործարքներ, որտեղ վաճառող պարտադրված չէ վաճառել, իսկ գնորդը չի կարող դիմել էքսպրոպրիացիայի կամ այլ հարկադիր ընթացակարգերի, որոնք նախատեսված են տվյալ երկրի իրավական համակարգով, եթե բանակցությունները ձախողվում են): Այն նաև չի կիրառվում ապրուստի վրա ազդեցությունների ժամանակ, երբ ծրագիրը չի փոխում հողի օգտագործման նշանակությունը ազդեցության ենթակա խմբերի կամ համայքների համար:

Գործառնական պահանջների ստանդարտը սահմանում է, որ ֆիզիկական և/կամ տնտեսական տեղափոխման դեպքում պետք է մշակել Տարաբնակեցման գործողությունների ծրագիր, որը առնվազն վերաբերվում է սույն ստանդարտի կիրառելի պահանջներին՝ անկախ ազդեցության ենթակա անձանց թվից: Այն պետք է ներառի փոխհատուցում հողի փոխարինման և այլ գույքի կորստի արժեքի չափով: Ծրագիրը պետք է մշակել՝ նվազեցնելու տեղափոխման համար բացասական ազդեցությունները; գտնելու համար զարգացման հնարավորություն; զարգացնելու համար տարաբնակեցման բյուջեն ու ժամանակացույցը; և հաստատելու համար ազդեցության ենթակա բոլոր անձանց (այդ թվում՝ համայնքների) իրավունքները: Հատուկ ուշադրություն պետք է դրածնել աղքատների ու խոցելի անձանց վրա: Հողի նկատմամբ իրավունքների ձեռքբերման բոլոր գործարքները, ինչպես նաև փոխհատուցման չափերն ու տեղափոխման գործողությունները, պետք է պատշաճ կերպով փաստագրվեն ու մոնիտորինգի ենթարկվեն:

ՕՔ 4.03-ի պահանջների համաձայն՝ պատվիրատուն (կառուցապատողը) ընթացակարգեր է հաստատելու՝ ՏԳԾ-ի իրականացմանը հետևելու ու գնահատելու նպատակով և անհրաժեշտության դեպքում ուղղիչ միջոցառումներ է ձեռնարկելու: Մոնիտորինգի գործողությունների ծավալը համապատասխանելու է ծրագրի ռիսկերին ու ազդեցություններին: Զգալի հարկադիր տարաբնակեցման ռիսկերով ծրագրերի համար պատվիրատուն հրավիրելու է իրազեկ տարաբնակեցման մասնագետներ ունեցող արտաքին մոնիտորինգի գործակալության, որը խորհրդատվություն է տրամադրելու սույն Ստանդարտին համապատասխանության հարցում և ստուգելու է պատվիրատուի մոնիտորինգի տեղեկատվությունը: Արտաքին մոնիտորինգի գործակալության ներգրավվման անհրաժեշտությունը սահմանվելու է ՏԳԾ-ով՝ ազդեցությունների գնահատման հետազոտություններից հետո:

2.4 Հողի օտարման, նվիրաբերության և տնօրինման այլ տարբերակներ

Բանակցային կարգավորում կամ հոժարակամ գնորդ/վաճառող.

Հողի բանակցային ձեռքբերումը (հոժարակամ գնորդ ու հոժարակամ վաճառող) այն գործընթացն է, երբ հողի սեփականատերերը համաձայնվում են ծրագրին փոխանցել հողի

նկատմամբ կամ դրա օգտագործման իրենց իրավունքները՝ որոշ համաձայնեցված պայմաններով, ինչպիսին են՝ նմանատիպ հողով կամ դրամական փոխհատուցումը: Բանակցային կարգավորումը կիրառվում է, երբ հողի գնումը պահանջվում է ոչ թե հանրային շահի համար, այլ հիմնված է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- արդար և համապատասխան փոխհատուցման դրամադրում հոժարակամ վաճառողին, ինչը կապահովի, որ ԱԵԱ կապահանի ոնյն կամ կունենա ավելի լավ ապրուստի կարգավիճակ;
- ազդեցության ենթակա կողմերի հետ իմաստալից ու լավ փաստագրված խորհրդատվության իրականացում, ներառյալ՝ հողին չվերաբերվող իրավունքների մասով, եթե այդպիսիք առկա են;
- ապահովել, որ բոլոր ընթացակարգերն իրականացվում են թափանցիկ, հետևողական ու արդարացի ձևով
- երրորդ անկախ կողմի ներգրավում ստուգելու և հաստատելու համար, որ գնման գործընթացը առանց պարտադրանքի է, վաճառքի սակագինը հավասարակշռված է և անաչառ բնույթ է կրում;
- փոխհատուցումը հիմնված է անկախ գնահատողի գնահատման վրա;
- ԱԵԱ իրավունք ունի հրաժարվել բանակցային կարգավորումից, եթե փոխհատուցման վերաբերյալ անհամաձայնություն լինի:

Բանակցային կարգավորմանը կարող է հետևել Կառուցապատողը՝ իրականացնելով հետևյալ փուլերը.

- 1) Ստուգման ընթացքը (ներառյալ՝ ազդեցության նվազեցումը)
- 2) Կառուցապատողի կողմից Հողի օտարման թիմի հաստատում
- 3) Բողոքների լուծման մեխանիզմի հաստատում (ներառյալ՝ ԲԼԽ-ով զբաղվող անձի նշանակում)
- 4) Ծրագրի պլանի ու հողի օտարման վերաբերյալ հանրային լսումների կազմակերպում (ներառելով ԾԱԱ-ներին, տեղական կառավարման մարմիններին, փորձագետներն և/կամ այլ շահառու կողմերին): Հանրային լսումները պետք է պատշաճ կերպով հայտարարվեն ու փաստագրվեն՝ հանդիպումների արձանագրություններ ու մասնակիցների ցուցակներ կազմելով:
- 5) Գույքագրման իրականացում ու հողի օտարման ազդեցությունների նույնականացում (հող, բույսեր, հողի վրա բարելավումներ և այլ գույք): Գույքագրման ու նույնականացման արդյունքների հայտարարում: Գույքագրումն ու նույնականացումը ենթադրում է հողի չափագրման ու քարտեզագրման գործողություններ, ինչպես նաև իրավասու մարմինների ու հողի վրա ծառերի, մշակաբույսերի և այլնի վրաբերյալ տվյալների հավաքագրում:
- 6) Անկախ լիցենզավորված գնահատողի ներգրավում:
- 7) Փոխհատուցման գնահատում անկախ գնահատողի կողմից:
- 8) Փոխհատուցման ձևի ու գումարի որոշում խորհրդատվության միջոցով: Բանակցված փոխհատուցման գումարը չի կարող լինել պակաս, քան գնահատված շուկայական

արժեքը: Բոլոր բանակցությունները պետք է իրականացվեն թափանցիկ պայմաններում և պետք է հաստատվեն երրորդ կողմի կողմից (համայնքի անդամ, նոտարական գրասենյակի ներկայացուցիչ, տեղական կառավարման մարմին, կամ այլ մարմին, որը շահագրգիռ չէ տվյալ գործընթացում)՝ ապահովելու համար երկու կողմերին տեղեկատվության համաչափ հասանելիությունը և սակարկման հնարավորությունը:

- 9) Գնման համաձայնագրի համար փաստաթղթերի պատրաստում, հողի նկատմամբ իրավունքներից ազատման պաշտոնական գրանցման ձևաթղթի պատրաստում:
- 10) Փոխհատուցման վճարում. Փոխհատուցման տրամադրում կանխիկ գումարով, ինչպես համաձայնացվել է խարհրդատվության ընթացքում Հողի սեփականատիրոջը կամ նրա լիազորված ներկայացուցիչներին՝ ներառյալ իրավունքներից պատշաճ ազատում:
- 11) Մոնիտորինգի նպատակով հողի ձեռքբերման բանակցային գործընթացի պատշաճ փաստագրում:
- 12) Մոնիտորինգի հաշվետվության մշակում՝ իրականացված բոլոր գործողությունների ներկայացմամբ ու համապատասխան հիմնավորող փաստաթղթերով:

Գնված հողերի փոխանցման ու թարմացված գրանցումները պետք է լրացվեն նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը:

Հողի կամավոր նվիրատվություն (ՀԿՆ):

ՀԿՆ կիրառումը հանդիպում է այն դեպքերում, երբ համայնքի զարգացման ծրագրերին անհրաժեշտ է հողի տեսքով ներդրումներ համայնքից (դա շեշտում է համագործակցությունը և ծրագրի սեփականությունը): Այն դեպքում, երբ հողի նվիրատվության գործընթաց է կիրառվում որևէ ծրագրում, կառուցապատողի թիմը պետք է համալիր ստուգում իրականացնի խուսափելու համար ազդեցության ենթակա անձանց վրա և ՀԲ-ի վարկանիշի վրա հնարավոր բացասական ազդեցության ռիսկերից:

Հողի կամավոր նվիրատվության հիմնական սկզբունքներն են՝ տեղեկացված համաձայնությունը և ընտրության հնարավորությունը: “Տեղեկացված համաձայնություն” նշանակում է, որ մարդիկ լիարժեք տեղեկությունների են տիրապետում ծրագրի և դրա հետևանքների մասին ու ազատորեն համաձայնություն են հայտնում մասնակցել ծրագրին կամավոր նվիրատվության միջոցով: “Ընտրության հնարավորություն” նշանակում է, որ մարդիկ հնարավորություն ունեն համաձայնվել կամ չհամաձայնվել հողի նկատմամբ իրենց ունեցած իրավունքները փոխանցելուն:

Կամավոր նվիրատվության համար չափորոշիչներն ու ուղենիշերը հետևյալն են՝

- a) Ազդեցությունները սահմանային են (հիմնվելով կորստի տոկոսի ու մնացող գույքի նվազագույն չափի վրա)՝
 - Նվիրաբերված հողը չի գերազանցում ազդեցության ենթակա տնային տնտեսության ընդհանուր հողի 5%-ը;
 - Նվիրաբերված հողը չի հանգեցնում չփոխհատուցված մշտական ոչ հողային գույքի:

- b) Ազդեցությունները չեն հանգեցնում տնային տնտեսությունների տեղափոխման կամ վերջիններիս եկամուտի ու ապրուստի միջոցների կորստի:
- Հողը գյուղատնտեսական է;
 - Միայն երկրորդական կառույցներն են ազդեցության ենթարկվում: Տնային տնտեսությունը չի ենթարկվում ֆիզիկական տեղափոխման ծրագրի ու հողի նվիրատվության հետևանքով;
 - Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը չի ընկնում աղքատ կամ խոցելի կատեգորիայի ներքո:
- c) Կամավոր նվիրատվություն կատարող տնային տնտեսությունները հանդիսանում են ծրագրի անմիջական շահառու:
- Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը կարող է զգալ ծրագրի անմիջական օգուտները:
- d) Նվիրաբերված հողը սեփականության կամ այլ ծանրաբեռնվածության մասով որևէ վեճի առարկա չէ:
- Ազդեցության ենթակա ՏՏ-ները ունեն պաշտոնապես գրանցված սեփականություն;
 - Հողը զբաղեցված չէ կամ չի օգտագործվում մեկ այլ անձի կողմից;
 - Հողի սեփականության հարցը վեճի առարկա չի հանդիսանում:
- e) Ազդեցության ենթակա համայնքների հետ հանրային լսումները ազատ ու թափանցիկ են:
- Ազդեցության ենթակա տնային տնտեսությանը պետք է տեղեկացնել, որ նրանք իրավունք ունեն փոխհատուցում ստանալ իրենց հողի համար և գումարի այն չափի մասին, որը նրանց կարող է փոխհատուցվել այն հողակտորի համար, որը նրանք ցանկանում են նվիրաբերել;
 - Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը ստանում է հստակ ու ճշգրիտ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ և մասնակցում է ծրագրի պլանավորման հարցում:
- f) Հողի հետ կապված գործարքները զուգորդվում են սեփականության իրավունքների փոխանցմամբ:
- Հողի սեփականության պաշտոնական փաստաթուղթը թարմացվում է:
- g) Կազմվում են լսումների արձանագրություններ, փաստագրվում են բողոքներն ու դրանց լուծման համար միջոցները:

- Համաձայնագիրը պատշաճ ձևով է կազմվում՝ ներառելով ազդեցության ենթակա անձի, կառուցապատողի ու վկաների ստորագրությունները;
- Հանրային լսումները, ստացված բողոքներն ու ձեռնարկված գործողությունները արձանագրվում են:

Հետևյալ հիմնական քայլերը պետք է ձեռնարկվեն կառուցապատողի կողմից հողի նվիրատվության ընթացակարգերի կիրառման դեպքում.

- 1) Նույնականացնել հողը և արձանագրել ողջ գործընթացը;
- 2) Ստեղծել բողոքների լուծման մեխանիզմ և հանրային լսումներ կազմակերպել: Վերջիններս պետք է պատշաճ կերպով հայտարարվեն, և հանդիպումների արձանագրություններ ու մասնակիցների ցուցակներ պետք է կազմվեն:
- 3) Ստորագրել հողի կամավոր նվիրատվության համաձայնագրերը: Այլ իրավական ընթացակարգեր, ինչպիսին են համայնքի խորհրդի կամ/և կառավարության որոշում կարող է պահանջվել՝ կախված նվիրաբերված հողի կարգավիճակից (համայնքային կամ պետական հողերի դեպքում):
- 4) Մոնիտորինգ. Առաջընթացի մասին մոնիտորինգի հաշվետվություններում կառուցապատողը պետք է ներկայացնի կամավոր նվիրատվության ընթացքը, ԲԼԽ-ի ստեղծումը, ստացված բողոքները, կազմակերպված հանրային լսումները, ձեռքբերված համաձայնությունները, և այլն:

Հիմնադրամը պետք է՝ (i) ստուգի, որ նվիրատվությունը փաստացի կամավոր է և պարտադրանքի արդյունք չէ՝ օգտագործելով բանավոր ու գրավոր արձանագրություններ և երրորդ անկախ կողմից հաստատումներ, ինչպիսին են նշանակված հասարակական կազմակերպությունները կամ իրավական մարմինները; և (ii) ապահովի, որ կամավոր նվիրատվությունները զգալիորեն չեն ազդում ազդեցության ենթակա անձանց ապրուստի ստանդարտների վրա ու նրանց համար անմիջական օգուտներ ունեն:

2.5 ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի պարտադրված վերաբնակեցման քաղաքականության համեմատություն

Ազդեցություն	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր	Համաշխարհային բանկի ԳՔ 4.03 (P5)	Կիրառելի փաստաթուղթը
Հողի սեփականատերեր	Հողի փոխհատուցում տրվում է միայն հողի նկատմամբ օրինական իրավունքներ ունեցողներին	Խորհուրդ է տալիս կիրառել հողը մեկ այլ հողով փոխհատուցման տարբերակը: Փոխհատուցման այլ տարբերակը հանդիսանում է փոխարինման արժեքը:	ԳՔ 4.03
Հողօգտագործողներ	Հողի փոխհատուցում տրվում է միայն գրանցված հողօգտագործողներին	Հողի նկատմամբ իրավունքների բացակայությունը փոխհատուցման տրամադրման արգելք չէ: Հողի նկատմամբ իրավունք չունեցող օգտագործողները նույնպես փոխհատուցվում են՝ անկախ հողի	ԳՔ 4.03

Ազդեցությ ուն	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր	Համաշխարհային բանկի ԳՔ 4.03 (PS5)	Կիրառելի փաստաթուղթը
		օգտագործման իրավական կարգավիճակից:	
Հողօգտագործողներ	Բերքի կորստի փոխհատուցում տրամադրվում է միայն գրանցված օգտագործողներին (սեփականատերեր և վարձակալներ)	Բոլոր հողօգտագործողները (օրինական կամ անօրինական) իրավունք ունեն կորցված բերքի դիմաց փոխհատուցում ստանալ: Կարող է տրամադրվել այլ հողակտոր և եկամուտը պետք է վերականգնվի առնվազն մինչ ծրագրի սկիզբը եղած մակարդակը	ԳՔ 4.03
Տներ և այլ շինություններ	Ծրագրի կողմից տներին/շինություններին հասցված վնասը փոխհատուցվում է, բացառությամբ չգրանցված շինությունների	Համաշխարհային բանկի քաղաքականությունը փոխհատուցում է նախատեսում նաև չգրանցված շինությունների համար	ԳՔ 4.03
Հողի գնահատում	Հողի արժեքը գնահատվում է ըստ գործող շուկայական գների գումարած 15% գնահատված արժեքից	Հողի արժեքը որոշվում է ըստ գործող շուկայական գնի/փոխարինման արժեքի	ՀՀ օրենսդրությունը (ՀՊՍՕ ՀՀ օրենք)
Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում	Ազդեցության քանակական գնահատման, ազդեցության տնտեսական ծախսերի, փոխհատուցման ստացման իրավունքի, փոխհատուցման գումարի և ֆինանսական օժանդակության մասին տեղեկատվությունը ծրագրի ազդեցությունը կրողներին տրամադրվում է մինչև գերակա հանրային շահ ճանաչելու/նախնական ուսումնասիրության մասին ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետը	Հանրային քննարկումները և տեղեկատվության հրապարակումն իրականացվում է ազդակիր անձանց մասնակցությամբ. ՀՔԾ-ը պետք է պատրաստվի ՎԳԴ-ի հետ միասին:	ԳՔ 4.03և ՀՀ օրենսդրությունը (ՀՊՍՕ ՀՀ օրենք), երկուսն էլ կիրառվելու են:
Եկամուտների մակարդակի վերականգնում	Ոչ մի դրույթ չի պարունակում եկամուտների/դրանց աղբյուրների վերականգնման, ծրագրից խիստ տուժածներին և խոցելի խմբերին օգնության տրամադրման կամ տեղահանման ծախսերի փոխհատուցման մասին	Համաշխարհային բանկը պահանջում է եկամուտների մակարդակի վերականգնում, շոշափելի կորուստների և տեղահանման ծախսերի փոխհատուցում	ԳՔ 4.03

Ազդեցություն	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր	Համաշխարհային բանկի ԳՔ 4.03 (PS5)	Կիրառելի փաստաթուղթը
Անվտանգության գոտում հողի արժեքի կորուստ	Փոխհատուցում նախատեսված չէ էլեկտրահաղորդման լարերի ներքևում գտնվող հողի արժեքի կորստի համար (օրինակ՝ շինարարություն հնարավոր չէ)	Բնակավայրերի նշանակության հողամասերի սեփականատերերը պետք է ստանան փոխհատուցում, որը հավասար կլինի հողամասի առժեգրկման արժեքին:	ԳՔ 4.03

2.6 Բացերի վերլուծություն

ՀՀ օրենսդրական դաշտի և ԳՔ 4.03-ի հիմնական տարբերությունն այն է, որ ՀՀ օրենսդրությունը փոխհատուցում նախատեսում է հողի և շինությունների գրանցված սեփականության իրավունքների առկայության դեպքում, իսկ ըստ Համաշխարհային բանկի ԳՔ 4.03-ի՝ փոխհատուցում պետք է տրամադրվի նույնիսկ գրանված իրավունքների բացակայության դեպքում: Սույն ծրագրի համար կիրառվում է Համաշխարհային բանկի ԳՔ 4.03-ը:

Խնդիրներ են առաջանում նաև իրականացման և մոնիտորինգի մասով, քանի որ ՀՀ օրենսդրությունն այս առումով զերծ է հստակությունից և երկիմաստ է: Համաշխարհային բանկի ԳՔ 4.03-ի կիրառումը զգալիորեն տարբերվում է ՀՀ օրենքի կիրառումից: Այդ տարբերությունը նվազեցնելու համար առաջարկվում է ՎԳԾ պատրաստման համար միջազգային խորհրդատու վարձել, օժանդակել հանրային քննարկումներին, ուսուցողական դասընթացներ կազմակերպել բնապահպանական և սոցիալական անձնակազմի համար և իրականացնել մոնիտորինգ:

3. ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ

3.1. Իրավունակություն

Ծրագրի շրջանակում փոխհատուցման կամ տեղահանման փոխհատուցման իրավունք ունեն հետևյալ խմբերը.

(ա) ԾԱԱ-երը, որոնք կորցնում են հողամասերը՝ որոնց հանդեպ ունեն սեփականության վկայական կամ ավանդական իրավունքներ, հողօգտագործողներն ում իրավունքը կարելի է օրինականացնել կամ հնարավոր չէ օրինականացնել:

(բ) Հողակտորները զբաղեցնողները կամ բնավարձակալները:

(գ) Հողի վրա գտնվող շինությունների, բերքի, բուսականության կամ այլ օբյեկտների սեփականատերերը և

(դ) Ծրագրի ազդեցության այն կրողները, որոնք կորցնում են իրենց բիզնեսը, եկամուտները և աշխատավարձերը:

Փոխհատուցման ստացման իրավունքը սահմանափակվում է վերջնաժամկետով, որը մարդահամարի և վնասների գույքագրման մեկնարկի ամսաթիվն է: Սահմանված վերջնաժամկետից հետո նոր բնակեցում հաստատողները, ակտիվները բարելավողները և նոր գործունեություն սկսողները փոխհատուցում չեն ստանա:

3.2. Իրավունքի շրջանակ

Հողամաս, շինություններ, եկամուտ կորցնող ԾԱԱ-երի համար փոխհատուցում նախատեսող դրույթները կներառեն մշտական և ժամանակավոր հողամասին, մշակաբույսերին և ծառերին պատճառված վնասի հատուցում:

Վերականգնման նպաստների համար հիմք է ծառայել Հրազդան-Շինուհայր ՕԳ-ի վերականգնման ծրագիրը (Հայաստան, ԾԻԳ՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, ՄՖԻ՝ ՀԲ):

ԾԱԱ-երը կարող են դասակարգվել ստորև նշված խմբերից մեկին.

(ա) **Օրինական սեփականատերեր**՝ անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն ֆորմալ իրավունք (ներառյալ նախադեպային և ավանդական իրավունքները, որոնք ճանաչվում են երկրի օրենսդրությամբ).

(բ) **Օրինականացման ենթակա ԾԱԱ-երը**՝ անձինք, ովքեր մարդահամարի մեկնարկի պահին հողի նկատմամբ ֆորմալ իրավունք չունեն, սակայն ունեն հողի կամ ակտիվի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ ճանաչելի պահանջներ կամ այնպիսի պահանջներ, որոնք դառնում են ճանաչելի ծրագրի շրջանակներում վերաբնակեցման գործողությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական միջոցառումների իրականացման դեպքում և, որոնք բխում են օրենսդրությունից և ավանդական օգտագործումից.

(գ) **Օրինականացման ոչ ենթակա ԾԱԱ-երը**՝ անձինք, ովքեր իրենց կողմից զավթած հողի նկատմամբ չունեն ճանաչելի իրավունք կամ պահանջ:

3.2.1. Հող

Փոխհատուցման շրջանակի մանրամասները ներկայացված են ստորև.

- Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերին տրամադրվելու է (i) դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15 տոկոս :, կամ (ii) նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտոր, որն ընդունելի է ԾԱԱ-ի համար: Այն հողակտորները, որոնք ծրագրի անուղղակի ազդեցության հետևանքով կդառնան անհասանելի կամ մշակման և այլ օգտագործման համար անպիտան, կներառվեն ազդեցության ենթարկված հողակտորների մեջ: Երբ ԾԱԱ-ի (սեփականատերեր, վարձակալներ, բնավարձակալներ) հողակտորի ավելի քան 10 տոկոսը տուժում է, ապա ծրագրի ԾԱԱ-ն կստանա ստորև նշված զգալի վնասների նպաստը (տես 16-րդ էջը): Փոխհատուցումը չի նվազեցվի գործարքի և գրանցման ծախսերով:
- Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերը կստանան՝ դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական արժեքի չափով գումարած 15 տոկոս : Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա՝ տեղափոխման հող (նմանատիպ կամ ավելի լավ)՝ նույն համայնքի վարչական սահմաններում ԾԱԱ-երի հետ կխորհրդակցվի այլընտրանքային հողամասի ընտրության հարցը և կտրամադրվի ազդակիր հողամասին հնարավորինս մոտ գտնվող հողամաս կամ, եթե դա հնարավոր չէ, կտրամադրվի դրամական փոխհատուցում: Փոխհատուցումը չի նվազեցվի գործարքի և գրանցման ծախսերով: Այն հողակտորները, որոնք ծրագրի անուղղակի ազդեցության հետևանքով կդառնան անհասանելի կամ մշակման և նման օգտագործման համար անպիտան, կներառվեն ծրագրից տուժած հողակտորների մեջ:
- Օրինականացման ենթակա ԾԱԱ-երը կգրանցվեն որպես օրինական վարձակալ/սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական վարձակալ/սեփականատեր:
- Օրինականացման ոչ ենթակա ԾԱԱ-երը, ովքեր չեն կարող օրինականացվել կամ, ովքեր օգտագործում են ազդեցության ենթակա հողակտորը առանց պաշտոնական իրավունքների (չգրանցված օգտագործող/ոչ պաշտոնական վարձակալ), կփոխհատուցվեն միայն այն բարելավումների համար, որոնք առկա են ազդեցության ենթակա հողակտորի վրա:
- Վարձակալները կարող են սեփականության իրավունք ձեռք բերել, օրենքով սահմանված կարգով, և փոխհատուցվել որպես սեփականատեր; կամ նրանք կարող են հնարավորություն ստանալ նոր վարձակալություն ձևակերպել՝ ըստ հողի սեփականատիրոջ հետ համաձայնագրի: Եթե դա հնարավոր չէ, ԾԱԱ փոխհատուցում կստանա, որը հավասար է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) + 15% `` հետևյալ համամասնությամբ՝ ըստ վարձակալության երկարության..i) < 1 տարի 5%, 2) <15 տարի 14%; 3) տարի 20%;4) >25 տարի 25%:

3.2.2. Պետական և համայնքային հողեր

- ՖՎ կայանների տեղակայման համար անհրաժեշտ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողերը կօտարվեն Ներդրողի կողմից համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի կամ համաձայն 65-րդ հոդվածի 6 մասի կտրամադրվեն անհատույց սեփականության իրավունքով, այն է՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ, նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Կառավարության համապատասխան որոշման մեջ և նվիրաբերության պայմանագրում պետք է սահմանվեն հողամասի օգտագործման նպատակներն ու պայմանները: Այդ ընթացքում իրականացվելու է սոցիալական համալիր ստուգում ապահովելու համար, որ համայնքային հողերի օգտագործողների համար որևէ ազդեցություններ չեն առաջանալու:

3.2.3. Այլ փոխհատուցումներ և նպաստներ

Բերք: Կորցված բերքի դիմաց դրամական փոխհատուցումը հաշվարկվում է որպես մեկ տարվա (Այն դեպքերում, երբ ազդակիր հողամասը ցանված է օգտակար բույսով, որը աճում է մի քանի տարի, առանց յուրաքանչյուր տարի վարելու ու ցանելու անհրաժեշտության, և որը վնասվել է ցանր մեքենայի անցման արդյունքում, ապա փոխհատուցումը հավասար կլինի երեք տարվա համախառն բերքի շուկայական արժեքին) համախառն բերքի շուկայական արժեք: Բերքի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի վարձակալներին, այնպես էլ սեփականատերերին՝ հաշվի առնելով երկուսի միջև բնավարձակալության գործող պայմանագիրը: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք կունենան ստանալ փոխհատուցում՝ համաձայն ՔԳ 4.03:

- Ծառեր: Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Զգալի վնասների նպաստ: Դրամական կանխիկ փոխհատուցում կտրամադրվի Ծրագրի այն ՏՏ-ներին, ներառյալ վարձակալներին ու իրական հողօգտագործողներին, որոնց սեփականություն հանդիսացող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական հողերի 10%-ը կամ ավելին ազդեցության է ենթարկվում , և ովքեր հողօգտագործման արդյունքում բերք են ստանում: Գյուղատնտեսական հողերի 10% կամ ավելի կորստի ազդեցություն ունեցող ԾԱԱ-ները լրացուցիչ փոխհատուցում են ստանալու՝ ազդեցության ենթակա հողակտորից ստացվող 1 տարվա բերքին համապատասխան: Վերոնշյալ նպաստի հաշվարկը հիմնված է հողերի օգտագործման իրական նպատակի վրա՝ անկախ կադաստրում, պետական գրանցման վկայականում կամ հողի նկատմամբ իրավունքի մասին վկայող այլ փաստաթղթերում նշված օգտագործման նպատակից:

- ԾԱԱ-երը կստանան հետևյալ դրամական աջակցությունը՝ ծախսերը/տուրքերը ձեռք բերման և փոխհատուցումների վճարման հետ կապված, որոնք ներառում են՝

- Լիազորագրի (ՀՀ-ից կամ ՌԴ-ից) հետ կապված ծախսեր/տուրքեր

- Ժամկետի սպառման դեպքում անձնագրի (նույնականացման քարտ) վերականգնման հետ կապված ծախսեր/տուրքեր
- Ժառանգության իրավունքի ճանաչման հետ կապված ծախսեր/տուրքեր
- Փոխանցման հարկերը և տուրքերը, որոնք կապված են հողի ձեռք բերման հետ կվճարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մաս:

• Խոցելիության նպաստ: Սոցիալապես խոցելի խմբերին (աղքատության շեմից ներքև և կանանց կամ տարեցների գլխավորությամբ տնային տնտեսությունների) կտրամադրվի վերականգնման նպաստ, որը հավասար է նվազագույն աշխատավարձի՝ 55000 ՀՀ դրամ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) վեցապատիկին և նախապատվություն ծրագրի իրականացման հետ կապված թափուր աշխատատեղերի համալրման ժամանակ:

Խոցելի խմբերի ներկայացուցիչներ համարվում են՝

- (i) Աղքատ տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՍՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
- (ii) Միայնակ, այրի կամ կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատող անձ չկա:
- (iii) Թոշակառուներից, տարեցներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատող անձ չկա:

• Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների փոխհատուցում.

Եթե սոցիալ-տնտեսական հետազոտության ընթացքում, Ներդրողի խորհրդատվական ընկերությունները հայտնաբերեն, որ ազդեցությանը ենթարկված տնտեսությունն աղքատ է, բայց դեռ ընդգրկված չէ Ընտանեկան Նպաստների Համակարգում, հետևաբար Ներդրողը պետք է տեղեկացնի ՀՀ ԱՍՑՆ-ին և համապատասխան պետական սոցիալական ծառայություններին՝ տվյալ տնտեսություններին Ընտանեկան Նպաստների Համակարգում ընդգրկելու համար՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի: Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունները կհամարվեն խոցելի անձինք և իրավունք կունենան ստանալ խոցելիության նպաստ Ընտանեկան Նպաստների Համակարգում գրանցվելուց հետո՝ Ներդրողի մասնագետների աջակցությամբ:

3.3. Ակտիվների գնահատման մեթոդները

Անշարժ գույքի գնահատման գործունեությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է («Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված): Հետևաբար, անշարժ գույքի գնահատման գործունեությունն իրականացվում է

իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ ըստ ՀՀ Լիցենզավորման մասին օրենքի պահանջների անշարժ գույքի գնահատման լիցենզիայի ստացումից հետո:

Անշարժ գույքի գնահատման պատվերի իրականացման իրավական հիմք է հանդիսանում անշարժ գույքի գնահատման սուբյեկտների միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիրը (նույն օրենքի 9-րդ հոդված): Բացի այդ, նույն օրենքի 10-րդ հոդվածը թվարկում է այն պարտադիր տեղեկությունների ցանկը, որ վերոնշյալ պայմանագիրը պետք է պարունակի:

Անշարժ գույքի գնահատումը կատարվում է ՀՀ Կառավարության կողմից հաստատված ստանդարտներին համապատասխան (7-րդ հոդված): Գնահատման ստանդարտը պետք է պարունակի.

ա) անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանակական և որակական բնութագրերը,

բ) անշարժ գույքի գնահատման մեթոդները,

գ) անշարժ գույքի գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ պահանջները,

դ) հղումներն այլ նորմատիվ իրավական ակտերին,

ե) անշարժ գույքի գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով օրենքի վերոնշյալ դրույթը՝ ՀՀ Կառավարությունը 2006թ.-ի հունիսի 8-ի ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտների սահմանման մասին» որոշումը, որով ՀՀ Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությանը (այժմ՝ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն) հանձնարարվեց 2006թ.-ի սեպտեմբերի 1-ից գործածության մեջ դնել Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման չափանիշները:

Անշարժ գույքի արժեքի գնահատումը կատարվելու է Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝

(ա) Ոչ **գյուղատնտեսական հողերը** կգնահատվեն փոխարինման գներով՝ հիմնվելով որակավորված գնահատողի կողմից իրականացված գնահատման վրա՝ համաձայն Անշարժ գույքի մասին ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ գնահատման ստանդարտին համապատասխան: :

(բ) **Կորցված բերքը** մեկ տարվա փոխհատուցման դեպքում կգնահատվի զուտ փոխարինման արժեքով (առաջին տարվա բերքի համար՝ համադրություն ֆերմերների/արտադրողի մոտ շուկայական արժեքի և բերքն ամբողջությամբ փոխարինելու հետ կապված ծախսերի

(գ) **Ծառերը/ թփեր** կգնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված նրանից ղեկորատիվ են, թե բերքատու.

- Ոչ մրգատու ծառեր/թփեր՝ փայտանյութի և ղեկորատիվ ծառերը կգնահատվեն հետևյալ խմբերին համապատասխան. (ա. փոքր ծառեր; բ. միջին մեծության ծառեր և գ. մեծ ծառեր)՝ հիմնվելով ծառի տեսակի և գնահատման հետևյալ ցուցանիշների վրա՝ փայտանյութի (որպես վառելանյութ կամ շինանյութ) ծավալ, ծառի/թփի բարձրություն, ինչպես նաև ծառերի համար ՀՕՏԾ-ով որոշվող այլ չափանիշների հիման վրա:

- Մրգատու ծառերը (թփեր, խաղողի այգիներ) կգնահատվեն՝ հիմնվելով տնկման տարիքի վրա: Մրգատու ծառերի (թփեր, խաղողի այգիներ) համար փոխհատուցումը կվճարվի՝ հիմնվելով ներդրման արժեքի և 1 տարվա համար տվյալ ծառի/թփի շուկայական արժեքի հիման վրա՝ բազմապատկելով այն տարիների քանակով, որոնք անցել են տնկման ամսաթվից հետո, սակայն ոչ ավել, քան այն տարիների քանակը, որն անհրաժեշտ է նոր մրգատու ծառ/թուփի աճեցնելու համար:

Փոխհատուցման միավոր արժեքները գնահատվելու են հավատարմագրված անկախ գնահատողների կողմից՝ համաձայն հստակ և թափանցիկ մեթոդոլոգիայի:

Նշում Ձեռնարկատիրական գործունեության, վերջինիս փոխհատուցման, բաց թողնված շահույթի, վերաբնակեցման և այլն-ի գնահատման անհրաժեշտության դեպքում նշված օրենքը չի կարող ամբողջությամբ կիրառվել և անհրաժեշտ կլինի ներգրավել հատուկ՝ ձեռնարկատիրական գործունեության կորուստների գնահատման, գիտելիքներով օժտված մասնագետի:

4. ՎԳԾ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Էլեկտրահաղորդման գծի նախագծերի պատրաստումից հետո կարելի է սկսել ծրագրի ազդեցությանն ենթակա մարդկանց մարդահամար, ներառյալ ազդեցությանն ենթակա անշարժ գույքի նախնական կադաստրային ուսումնասիրություն և դրա սեփականատերերի ու օգտագործման գրանցված իրավունք չունեցողների ցուցակագրում: Վերոնշյալ ուսումնասիրությունից հետո Կառավարությունը սույն ծրագրի իրականացումը կճանաչի բացառիկ՝ գերակա հանրային շահ: Կառավարության որոշման ընդունումից հետո Ներդրողի ընտրած խորհրդատուները կսկսեն մանրամասն ուսումնասիրություն, այսինքն՝ ծրագրի ազդեցությանն ենթակա անձանց մարդահամար և կորուստների մանրամասն գույքագրում՝ հողային և ոչ հողային ազդեցությունների:

Անկախ գնահատողն իրականացնում է ծրագրի ազդեցությանն ենթակա բոլոր ակտիվների գնահատում: Սա թույլ կտա ստեղծել փոխհատուցումների, վերաբնակեցման և կենսամակարդակի վերականգնման վճարների բյուջե: Սոցիալ-տնտեսական հարցում կանցկացվի ծրագրի ազդեցությանն ենթակա անձանց կենսամակարդակի սոցիալ-տնտեսական կողմերը (օրինակ՝ եկամուտների աղբյուրները, աղքատության մակարդակը, էթնիկ պատկանելիությունը, կրթությունը, առողջական վիճակը, սեփականության իրավունքով պատկանող/վարձակալված կամ օգտագործվող հողակտորները, տների տեսակները և արժեքը, և այլն) հասկանալու և կենսամակարդակի վերականգնման համար հատուկ փոխհատուցում պահանջող խոցելի խմբերի բացահայտման համար: Այս հարցումների տվյալների հիման վրա կնախապատրաստվի Վերաբնակեցման գործողությունների ծրագիր: Ծրագրի ազդեցության կրողները պարբերաբար կտեղեկացվեն ծրագրի ընթացքի մասին և բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմի մասին, իսկ ՎԳԾ-ն շարունակաբար կվերանայվի: ՎԳԾ-ն պետք է հաստատվի Համաշխարհային բանկի և ծրագիրը ֆինանսավորող կառույցի կողմից:

Հողի նկատմամբ գրանցված իրավունքներ չունեցող անձանց իրավունքների գրանցում

Գործնականում առանց գրանցված իրավունքների հողակտորները զբաղեցնողների և օգտագործողների իրավունքները կարող են օրինական կերպով գրանցվել, եթե դրանք չեն գտնվում ֆիզիկական և իրավաբանական անձանց օտարման ոչ ենթակա տարածքներում (հատուկ հանրային կամ պետական օգտագործման համար նախատեսված տարածքներ՝ ռազմական նշանակության, հիվանդանոցների տարածքներ, դպրոցներին հատկացված տարածքներ և բնակության համար անպիտան տեղանքներ, ինչպիսիք են գետերի հունները, ռադիոակտիվ տարածքները և այլ վտանգավոր կամ էկոլոգիական առումով անբարենպաստ վայրերը (տես ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածը): Իրավունքներն օրինականացնելու նպատակով ծրագրի ազդեցությունը կրողները պետք է նախաձեռնեն օրինականացման գործընթաց՝ համաձայն համապատասխան վարչական կանոնների: Ծրագիրն իրականացնողը ծրագրի ազդեցությունը կրողներին կօժանդակի հողակտորների օրինականացման գործում: Սա կարող է ներառել տեխնիկական և իրավական մասնագետների ներգրավում՝ ընթացակարգին աջակցելու համար, և, անհրաժեշտության դեպքում, ֆինանսական աջակցություն՝ պահանջվող տուրքերը վճարելու համար: Գործնականում սա նշանակում է, որ Ներդրողը կերաշխավորի անհրաժեշտ մասնագետների ներգրավումը

(այսինքն՝ իրավաբանների, գույքագրման մասնագետների)՝ ԾԱԱ-երին օրինականացման հարցում աջակցելու համար: Որոշ ԾԱԱ-երի համար սա կներառի համապատասխան ընթացակարգի վերաբերյալ ուղղորդում, իսկ որոշների համար՝ ավելի խոցելի ԾԱԱ-երի համար, կարող է ներառել ավելի ինտենսիվ աջակցություն ընթացակարգի յուրաանջուր փուլում: Ընդհանուր առմամբ, Ներդրողը պետք է որոշի՝ հիմք ընդունելով ԾԱԱ-երի վճարման կարողությունները, թե որ ԾԱԱ-երն իրավունք կունենան ստանալ ֆինանսական աջակցություն (օրինականացման համար պահանջվող տուրքերի մասով և այլն): Սա կորոշվի սոցիալ-տնտեսական ուսումնասիրության և կորուստների գույքագրման ընթացքում և ստացված տեղեկատվության հիման վրա: ՎԳԾ-ում հատուկ չափանիշներ կսահմանվեն տարբեր տեսակի աջակցության համար

Կենսամակարդակի բարելավման միջոցառումներ

Պետք է դիտարկել ազգային կազմակերպությունների և միջազգային դոնորների կողմից իրականացվող ծրագրերի հետ համակարգման հնարավորությունները սիներգետիկ էֆեկտը մեծացնելու համար:

5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

5.1. ՎԳԾ Իրականացման գործընթաց

ՎԳԾ իրականացումը պետք է ավարտվի մինչև շինարարական աշխատանքների սկիզբը: Կարելի է տարբերակել հետևյալ չորս փուլերը.

1) ՎԳԾ պատրաստում

Այս փուլում անհրաժեշտ կլինի վարձել փորձառու մասնագետներ կամ ենթակապալառու, որը ունի համապատասխան փորձով անձնակազմ: Աշխատակազմը պետք է փորձ ունենա ուսումնասիրության, մարդահամարի և գույքագրման աշխատանքներում, ինչպես նաև հաշվետվության պատրաստման: Քանի որ չափագրումն ու գնահատման գործունեությունը ենթակա է լիցենզավորման ՀՀ-ում, անհրաժեշտ կլինի նաև վարձել համապատասխան լիցենզիա ունեցող մասնագետների:

2) ՎԳԾ վերջնականացում

Այս փուլը պետք է իրականացվի աշխատանքային նախագծերի պատրաստմանը զուգահեռ: Այն ներառում է ծրագրի ազդեցության կրողների մարդահամար և վնասների մանրամասն ցուցակագրում, ինչպես նաև կենսամակարդակը մինչև ծրագրի սկիզբն եղած մակարդակը վերականգնելու և սոցիալական խոցելիությունից խուսափելու միջոցառումների մշակման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական հարցում:

3) ՎԳԾ իրականացում

Այս փուլը կսկսվի ՎԳԾ հաստատումից հետո: Ծրագրի ազդեցության կրողների հետ բանակցությունները կսկսվեն ծրագրի հենց այս փուլում: Այս փուլը ներառում է հողի գնահատման և ձեռքբերման ընթացակարգեր, փոխհատուցումների արդյունավետ վճարում, կենսամակարդակի բարձրացման միջոցառումներ և վերաբնակեցման ընթացակարգ: Այն ավարտվում է ծրագրի ազդեցության բոլոր կրողներին փոխհատուցման վճարումից հետո:

4) Շինարարական աշխատանքների մեկնարկ

Շինարարական աշխատանքները կսկսվեն միայն ծրագրի ազդեցության բոլոր կրողներին փոխհատուցման վճարումից հետո: Անկախ մոնիտորինգի խորհրդատուի կողմից մշակված համապատասխանության հաշվետվության հաստատումը Համաշխարհային բանկի կողմից կլինի շինարարական աշխատանքների մեկնարկի համար նախապայման:

Բողոքների դիտարկման և հասցեագրման, ինչպես նաև իրականացման մոնիտորինգի աշխատանքները կշարունակվեն նաև շինարարական աշխատանքների փուլում ծրագրի ազդեցության կրողների պահանջներին առանց ուշացումների դիտարկումը և վերաբնակեցման ընթացակարգերի ճիշտ իրագործումն երաշխավորելու համար:

Վերաբնակացման գործողությունների ծրագրի (ՎԳԾ) Մշակման ու իրականացման համար գործողությունների ծրագիր

Քայլ	Գործողություն	Պատասխանատու
Ա)	Վերաբնակեցման գործողությունների ծրագրի պատրաստում (ՎԳԾ)	
1	Աշխատանքային նախագծերի վերջնականացում	Ներդրող / Խորհրդատու
2	Պատրաստել մարդահամարի և կորուստների մանրամասն ցուցակագրման ձևերը, ՀՔՀՊ և ՎԳԾ ժամանակացույց	Ներդրող / Խորհրդատու
3	Ձեռք բերել կադաստրային տեղեկատվությունը և հողակտորների քարտեզները	Ներդրող / Խորհրդատու
4	Տեղական իշխանությունների հետ համակարգում	Ներդրող / Խորհրդատու
5	Հանրային քննարկումներ համայնքների ղեկավարների և ազդեցություն կրող անձանց հետ	Ներդրող / Խորհրդատու
6	Հանրային լսում ԾԱԱ-ների հետ	Ներդրող / Խորհրդատու/Հիմնադրամ
7	Մանրամասն չափագրման հետազոտություն, ազդեցության ենթակա բոլոր հողերի գույքագրման հետազոտություն	Ներդրող / Խորհրդատու
8	ՀՀ կառավարության որոշման նախագծի պատրաստում և ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ ԷԵԲՊՆ
9	Սոցիալ-տնտեսական մարդահամարի անց կացում, ազդակիր խոցելի ՏՏ-ների համար սոցիալական աշխատողների առաջադրանք	Ներդրող / Խորհրդատու
10	Որտեղ հնարավոր է, հողի օրինականացում	Ներդրող / Խորհրդատու
11	Հավաստել հողի սեփականությունը և առանձնացնել գրանցված սեփականության իրավունք չունեցողներին, անկախ իրավաբանների կողմից օրինականացման գործընթացում աջակցություն ստանալու համար	Ներդրող / Խորհրդատու
12	Ակտիվների գնահատում	Լիցենզավորված գնահատման մասնագետ
13	Մարդահամարի արդյունքների ներառում ՎԳԾ-ում	Ներդրող / Խորհրդատու
14	ՎԳԾ վերանայում և հաստատում	Հիմնադրամ
15	ՎԳԾ ներկայացում ՀՀ Կառավարությանը	Հիմնադրամ
16	Հանրային քննարկումներ և համապատասխան փաստաթղթերի հրապարակում	Ներդրող / Խորհրդատու/ Հիմնադրամ
17	ՀՔ դիտարկում և հաստատում	ՀՔ
	Վերջնական ՎԳԾ հրապարակում և հաստատում	Ներդրող/ՀՔ
Բ)	ՎԳԾ իրականացում	
1	ԾԱԱ-երի հետ հանրային քննարկումներ	Ներդրող / Խորհրդատու
2	Վերաբնակեցման/հողի ձեռքբերման ծանուցումների բաժանում	Ներդրող / Խորհրդատու
3	Փոխհատուցման գումարների վճարում	Ներդրող / Խորհրդատու
4	Համապատասխանության հաշվետվության պատրաստում	Անկախ մոնիտորինգի Խորհրդատու
5	Համապատասխանության հաշվետվության վերանայում և հաստատում	Հիմնադրամ / ՀՔ
6	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ	Ներդրող / ՇԿ

Փոխհատուցումների վճարում

Փոխհատուցումները կներառվեն ծարգրի մեջ և կվճարվեն Ներդրող կողմից: Հետևյալ գործընթացները և ընթացակարգը նախապես հաստատվել է ԾԱԱ-երին փոխհատուցումների վճարման ստուգման համար, հաշվի առնելով ՀՀ-ում այլ ծրագրերի փորձը (մասնավորապես՝ Հրազդանից Շինուհայր ՕԳ-ի վերակառուցում, ՀՀ):

- (i) ԾԱԱ նույնականացում՝ ԾԱԱ-երը կնույնականացվեն իրենց անձնագրերի միջոցով: Բոլոր ԾԱԱ-երն անդորրագրերը ստանալու պահին պետք է իրենց հետ ունենան անձնագրի պատճենը:
- (ii) Փոխհատուցման վճարում՝ ԾԱԱ-երի վճարումը կիրականացվի օտարման պայմանագիրը կնքելու պահից 7-15 օրյա ժամկետում:
- (iii) Տեղանքի ազատում՝ ԾԱԱ-երը կստանան ծանուցումներ, որով իրենց կառաջարկվի ստանալ փոխհատուցումը և ազատել տեղամասը համապատասխան ժամկետում:
- (iv) Բացակայող ԾԱԱ-երը՝ բացակայող ԾԱԱ-երը կստանան փոխհատուցումը ծանուցված վճարման ժամկետներից հետո: Եթե ԾԱԱ անհասանելի է, ապա սեփականությունը կօտարվի դատական կարգով և Ներդրողը կփոխանցի փոխհատուցման գումարը հատուկ դեպոզիտ հաշվին:

Փոխհատուցումների վճարումը կիրականացվի օտարվող հողամասը վերցնելուց առնվազն 10 օր շուտ: Որևէ հողամաս չի կարող անցնել Ներդրողի տիրապետման տակ՝ շինարարություն իրականացնելու համար, քանի դեռ համարժեք փոխհատուցումը չի վճարվել հողատերերին և վարձակալներին: Այնուամենայնիվ, վեճերի առկայության դեպքում փոխհատուցման գումարը բողոքարկող ԾԱԱ անունով կփոխանցվի դատարանի հատուկ դեպոզիտ հաշվին և կմնա այնտեղ մինչև դատարանի կողմից որոշման ընդունումը: Նման դեպքերում շինարարությունը կարող է սկսվել մինչև փոխհատուցման ԾԱԱ-ին վճարումը (միայն վերջինս դեպոզիտ հաշվին փոխանցելուց հետո): Շինարարական աշխատանքները կարող են սկսել եթե դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ, ազդակիր սեփականության նկատմամբ Ներդրողի իրավունքը գրանցվել է Կադաստրում և ՎԳԾ համապատասխանության հաշվետվությունն ավարտվել է:

Ներդրողը պատասխանատու է փոխհատուցումների և նպաստների ֆինանսավորման, փոխհատուցումների և վերաբնակեցման հիմնադրամների կառավարման և պահանջվող միջոցների ժամանակին հատկացման համար: Հատկացումները կդիտարկվեն եռամսյակային կտրվածքով ՎԳԾ-ով որոշված պահանջներին համապատասխան: Որևէ շինարարական աշխատանք չի սկսի, քանի դեռ անկախ մոնիտորինգի խորհրդատուի կողմից չի հաստատվել, որ ամբողջական փոխհատուցումը պատշաճ ձևով վճարվել է բոլոր ԾԱԱ-երին և ՀԲ կողմից չի հաստատվել մոնիտորինգի հաշվետվությունը (ՎԳԾ համապատասխանության հաշվետվություն):

5.2. Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմ

Շինարարության ընթացքում հավանական բողոքները, մտահոգությունները և առաջարկները ուսումնասիրելու նպատակով՝ կառուցապատողն ու հիմնադրամը պետք է իրականացնեն մանրամասն չափագրում ու մարդահամար, գնահատում, փոխհատուցում, ինչպես նաև պետք է

ստեղծվի Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼԽ), որպեսզի համայնքի բնակիչներն ու հավանական ԱԵԱ-ները հնարավորություն ունենան ներկայացնել իրենց առաջարկները կամ բողոքարկել որևէ գործողություն, որը կարող է ի հայտ գալ ծրագրի իրականացման, հողի ու այլ սեփականության դիմաց փոխհատուցման տրամադրման ընթացքում: Բողոքների լուծման մեխանիզմը այնպես է իրականացվում, որ մարդիկ ստանան իրենց խնդիրների լուծումները ժամանակին և արդյունավետ կերպով առանց դատարան դիմելու:

ԲԼԽ-ը ներառելու է մի շարք կողմեր՝ համայնք, հիմնադրամ, կառուցապատող և Բողոքների լուծման հանձնաժողով: Բացի այդ, հասարակական կազմակերպությունները Aarhus կենտրոնը կամ այլ տեղական շահառուները կարող են հետևել բանակցային ընթացքը և ներգրավվել Բողոքների լուծման հանձնաժողովում ոպես ոչ մշտական ներկայացուցիչներ:

Բողոքները կարող են դիտարկվել համայնքում, որտեղ բողոքը արձանագրվել է և ուղարկվեն Ներդրողի բողոքների համակարգողին, ով պատասխանատու է բողոքների գրանցման ու լուծման համար: Բողոքները կարող են նաև հավաքվել շինարարի մոտ, ով պետք է նույնպես դիմի Ներդրողի բողոքների համակարգողին, եթե բողոքը լուծում չստանա:

Բողոքների լուծման մեխանիզմը պետք է իրականացվի տեղում գյուղական ինստիտուտների և ՏԻՄ մարմինների մակարդակի վրա, ինչպես նաև միավորվեն ազգային մակարդակի վրա Ներդրողի մոտ:

Բողոքները կարող են հասցեագրվել համայնքների մակարդակի վրա (ՏԻՄ ղեկավար), որտեղ բողոքը կգրանցվի և կուղարկվի Ներդրողի բողոքների համակարգողին, ով պատասխանատու է բողոքների գրանցման և լուծման որոշման համար:

Շինարարական աշխատանքների ժամանակ ՇԿ հասցեագրված բողոքները նույնպես պետք է ուղարկվեն Ներդրողի բողոքների համակարգողին: Նույնիսկ եթե ՇԿ որոշել է լուծել բողոքը տեղում, բողոքին վերաբերող փաստաթղթերը պետք է գրանցվեն և փաստաթղթավորվեն Ներդրողի բողոքների համակարգողի /կոնտակտային անձի մոտ:

Ծրագրին վերաբերող բոլոր բողոքները կարող են նաև ուղղակիորեն ուղղվել Ներդրողի բողոքների համակարգողին հեռախոսի, էլ. փոստի կամ թղթային ձևով: Ներդրողը պետք է ապահովի ծրագրի բողոքների թե՛ գիծը ուղղակի բողոքների համար (ազգային մակարդակի վրա) և բոլոր ստացված բողոքները պետք է գրանցվեն բողոքների գրանցամատյանում:


Այսպիսով, հաստատվել է Ծրագրի Բողոքների լուծման 3 մակարդակ ունեցող մեխանիզմը.

- **Փուլ 1.** Դիմորդը կարող է ներկայացնել իր բողոքը կառուցապատողի բողոքների համակարգողին շինարարի կամ տեղական ինքնակառավարման մարմնի միջոցով: Բողոքը պետք է լուծվի 10 օրվա ընթացքում կամ շինարարի հետ համաձայնեցված ժամանակահատվածում: Նախքան շինարարության մեկնարկը Կառուցապատողը պետք է համապատասխան հայտարարություն հրապարակի համայնքում՝ ներառելով իր բողոքների համակարգողի կոնտակտային տվյալները:
- **Փուլ 2.** Եթե բողոքը չի լուծվել շինարարի կողմից (կառուցապատողի բողոքների համակարգող), ապա այն պետք է դիտարկվի կառուցապատողի կողմից 5 օրվա ընթացքում: Լուրջ բողոքների դեպքում, որոնք տեղում չեն կարող լուծվել, Բողոքների

լուծման հանձնաժողովը պետք է նիստ հրավիրի բողոքի ստացումից ու գրանցումից հետո 30 օրվա ընթացքում: Հանձնաժողովը պետք է կազմված լինի մշտական և ոչ մշտական անդամներից: Մշտական անդամներն են՝ Իրականացնող կազմակերպությունը (Հիմնադրամ), կառուցապատողի բողոքների համակարգողը և շինարարության կապալառուն: Ոչ մշտական անդամներն են՝ դիմորդը, համապատասխան մարզի ներկայացուցիչը, համայնքի ներկայացուցիչը և ՀԿ ներկայացուցիչներ: Բողոքների կոմիտեում որոշումները կայացվում են հանդիպման արձանագրության մեջ գրանցված անդամների (մշտական և ոչ մշտական) ձայների մեծամասնությամբ: ԾԱԱ 5 օր առաջ կտեղեկացվեն հանդիպման տեղի և ժամի մասին (ինչպես ոչ մշտական անդամներ):

- **Փուլ 3.** Եթե բողոքը չի լուծվում Կառուցապատողի ու ՇԿ-ի կողմից, ապա դիմորդը կարող է դիմել Հիմնադրամին: Վերջինս պետք է քննարկի այն ու պատասխանի դիմորդին 10 օրվա ընթացքում:

ԲԼԽ-ի ցանկացած փուլում բողոքը պետք է ներկայացվի գրավոր, իսկ բողոքի պատասխանը նույնպես պետք է դիմորդին տրվի գրավոր: Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմի սխեման ներկայացված է ստորև Պատկեր 6.3-ում:



Պատկեր 6 3: Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմի սխեմա

Այնուամենայնիվ, վերոնշյալ բողոքների լուծման մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացիների իրավունքը հայցն անմիջապես ուղարկել դատարան բողոքի ցանկացած փուլում: Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է երկարատև դատական գործընթացից խուսափելու նպատակով:

ՀԲ բողոքների լուծման մեխանիզմի ուղղակի մաս չէ, սակայն նա պետք է ստանա հաշվետվություններ այն մասին, թե ինչպիսի բողոքներ են ստացվել և ինչ քայլեր են դրան հետևել/ինչպես են մեղմացվել:

Հատուկ միջոցառումներ պետք է նախատեսվեն ԾԱԱ-երի համար, որոնք ապրում են հեռահար վայրերում և խոցելի անձանց համար, քանի որ բողոքների մեխանիզմը կարող է իրենց համար անսովոր լինել և իրավական գործընթացի հետ առնչվելն ոչ այնքան խոստումնալից՝ ելնելով իրենց փորձից:

Այնուամենայնիվ խորհուրդ է տրվում ծրագրի իրականացման ընթացքում գյուղական մակարդակի վրա մշտադիտարկման անցկացում անկախ սոցիալական մասնագետի կողմից և անձնական կապ ԾԱԱ-երի հետ:

Խոցելի ԾԱԱ-երը (կանանց կողմից ղեկավարվող և աղքատության շեմից ցածր տնային տնտեսություններ) կստանան իրավական/սոցիալական աջակցություն՝ բողոքարկելու գործընթացում աջակցություն տրամադրելու համար:

ԲԼՄ ընթացակարգը և ՇԿ ու Ներդրողի կողմից հաշվետվողականությունը

ՇԿ պարտավոր է աշխատանքը իրականացնել պայմանագրային պահանջներին համապատասխան, որը ներառում է՝

- Անձնակազմում բողոքների ընթացակարգի համար պատասխանատու անձի առկայություն, որը Ներդրողին կցուցաբերի տեխնիկական աջակցություն ցանկացած բողոքի լուծման հարցում, որը կարող է ի հայտ գալ ՎԳԾ պատրաստման և իրականացման ժամանակ (Այդ անձը պետք է 3 կամ ավելի տարվա նմանատիպ աշխատանքի փորձ ունենա, իրավագիտության կամ սոցիոլոգիայի բակալավրի/մագիստրոսի աստիճանը ցանկալի է):
- ՎԳԾ պատրաստման և իրականացման կարգավիճակի վերաբերյալ ռեգուլյար մոնիտորինգի հաշվետվությունների պատրաստում, ներառյալ ցանկացած բողոքի մանրամասները և ինչպես է այն լուծվել (եթե ՎԳԾ պատրաստման պարտականությունը փոխանցվել է ՇԿ):
- Եթե մարդահամարի ավարտից հետո ազդակիր խոցելի անձինք հայտնաբերվեն, ապա ՇԿ կվարձի պրոֆեսիոնալ փաստաբանների (սոցիոլոգներ/իրավաբաններ) ամբողջ գործընթացի ընթացքում այդ անձանց աջակցելու համար, և որևէ բողոքի առկայության դեպքում որպես անկախ փաստաբան հանդես գալու համար (եթե ՎԳԾ պատրաստման պարտականությունը փոխանցվել է ՇԿ):
- Ներդրողի և ԾԱԱ հետ միասին բողոքների լուծում և բողոքների լուծման կոմիտեում մասնակցություն:

Ներդրողը կանցկացնի աշխատանքներ, որոնք կներառեն՝

- Անձնակազմում համապատասխան անձի առկայություն, որը պատասխանատու է բողոքների համակարգման համար, այսուհետ՝ Բողոքների կոորդինատոր (ներառյալ առաջին կոնտակտ, դաշտային այցելություններ ՇԿ կողմից իրականացվող մեղմացնող միջոցառումների իրականացումը ստուգելու համար):

- Հեռախոսային կապ, էլ. փոստ և կոնտակտային անձի անունը:
- ՇԿ և ԾԱԱ հետ միասին բողոքների լուծում և բողոքների լուծման կոմիտեում մասնակցություն:
- Դատարանի հետ փոխհարաբերություններ:

Այնուամենայնիվ ԾԱԱ իրավունք ունի ընտրելու ուղղակիորեն թե ներկայացուցչի միջոցով շփվել Ներդրողի բողոքների կոորդինատորի հետ: Խոցելի տնային տնտեսությունները կունենան իրենց անհատական սոցիոլոգի և իրավաբանի աջակցությունը:

Բացի այդ, իրավաբանները կաջակցեն անօրինական ԾԱԱ-երին իրենց իրավունքները գրանցելու հարցում:

ՀԿ-երը, Օրհուսի կենտրոնը կամ տեղացի անդամ կազմակերպությունները կիրականացնեն բողոքների լուծման բանակցությունների մոնիտորինգ, կաջակցեն բողոքի արբիտրաժի հետ, կբարձրացնեն հանրային իրազեկումը: ԾԱԱ պետք է տեղեկացվեն, որ համայնքի ղեկավարի հետ կոնֆլիկտի դեպքում նրանք կարող են դիմել ՀԿ, վերջինիս կողմից բողոքի ընթացքին հետևելու համար: ՀԿ կիրականացնեն ԾԱԱ և համայնքի ղեկավարների միջև հարաբերությունների մշտադիտարկումը:

5.3. Մոնիտորինգ

Մոնիտորինգի միջոցառումները նախատեսված են փոխհատուցման և վերաբնակեցման միջոցառումների արդյունավետ և առանց ուշացումների իրականացումն ապահովելու համար: Հիմնադրամը լիակատար պատասխանատվություն է կրում վերաբնակեցմանը վերաբերող գործողությունների և դանց արդյունքների մոնիտորինգի համար Բանկի առջև, ներառյալ՝ ԲԼՄ (ստաված բողոքներ և իրականացված գործողություններ):

Առկա են որոշ խնդիրներ ակտիվների գնահատման մեխանիզմների/լիցենզավորման գործընթացի, փոխհատուցման վճարների ժամանակին տրամադրման և նախնական տեղեկատվության ապահովման, ծրագրի ազդեցության կրողների հանրային քննարկումների և ներգրավվածության մասով: Գոյություն ունեցող օրենքների կիրառումը համարվում է ամենամեծ բացը ազգային օրենսդրության և միջազգային պաշտպանիչ մեխանիզմների միջև: Խնդիր է նաև հողի նկատմամբ գրանցված իրավունքներ չունեցող հողատերերին կամ հողն օգտագործողների փոխհատուցումը: Այս դեպքում, պետք է կիրառվեն Համաշխարհային բանկի պաշտպանիչ մեխանիզմները և ծրագրի ազդեցության բոլոր կրողները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն:

ՀՀ օրենսդրությունը փոխհատուցումների վճարման մոնիտորինգ չի նախատեսում: Մոնիտորինգ իրականացվում է միայն այն բանից հետո, երբ ծրագրերի ազդեցության կրողները ներկայացնում են բողոքների և դատական հայցեր: Միջազգային չափանիշներին բավարարելու համար առաջարկվում է իրականացնել փոխհատուցման ընթացակարգերի և վճարումների մոնիտորինգ, որը պետք է անցկացվի տեղական պայմաններին ծանոթ որակավորված փորձագիտական թիմի կողմից:

Մոնիտորինգի ընթացքում ծրագրի առաջընթացը պետք է դիտարկվի երեք փուլով.

1. Մինչ վերջնական նախագծի սկսելը/հողաչափման աշխատանքների մեկնարկը (ԻԿ պատասխանատու է այս փուլի համար: ՇԿ պատասխանատու կլինի այս փուլի համար, եթե

ՎԳԾ պատրաստման պարտականությունը տրվել է իրեն: Վերջինիս հիման վրա կպատրաստվի Ամսական մոնիտորինգի հաշվետվությունը)

- Փոխհատուցման գործընթացում նախարարական, ազգային և տեղական մակարդակով ներգրավված կառույցների փոխգործակցություն և առաջադրանքների բաժանում:
- Տարածքային և տեղական մակարդակներով (մարզեր) հանրային իրազեկման և քննարկումների գործընթաց:
- Հողերի օտարման գործընթաց, ներառյալ հողերի ձեռքբերում և օտարումների գրանցում, և անշարժ գույքի գնահատում և բանակցության մեխանիզմներ:
- Վերաբնակեցման վերաբերյալ որոշման կայացման չափանիշներ:

2. Չափագրման աշխատանքներից հետո և շինարարական աշխատանքներից առաջ (կատարողական մոնիտորինգ) (ԻԿ պատասխանատու է այս փուլի համար: Անհրաժեշտ կլինի վարձել անկախ խորհրդատուի ով փորձառու կլինի ՎԳԾ համապատասխանության հաշվետվության պատրաստման մեջ և ներգրավված չի լինի ՎԳԾ իրականացման գործընթացում):

- Ծրագրի ազդեցության բոլոր կրողներին փոխհատուցման տրամադրում առանց ուշացումների:
- Խնայողական և ներդրումային ծրագրերի, ինչպես նաև պտտվող հիմնադրամի ծրագրի հետ արդյունավետ փոխկապակցվածություն սոցիալական վիճակի վատթարացումից խուսափելու համար:
- Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմների ստեղծում և գործողություն:
- Իրազեկում և հանրային քննարկումներ ծրագրի ազդեցության կրողների հետ:
- Ստացված բողոքներ և լուծումների ընթացքը;
- Հողի ձեռքբերման կարգավիճակ և հողի փոխհատուցման վճարներ:
- Փոխհատուցում ծրագրից տուժած շինությունների և այլ ակտիվների դիմաց:
- Կորցված եկամտի փոխհատուցում:
- Որպես փոխհատուցում տրամադրվող հողակտորների ընտրություն և բաշխում և
- Եկամտի վերականգնման միջոցառումներ:

3. Շինարարական աշխատանքներից հետո (ազդեցության մոնիտորինգ)

- Ծրագրի ազդեցության կրողների հնարավոր վերաբնակեցման միջոցառումների (Վերաբնակեցման գործողությունների ծրագիր) և տեղահանումների արդյունավետ իրականացում:
- Բողոքների դիտարկման և բավարարման մեխանիզմների արդյունավետ իրականացում և արդյունքների ապահովում: Իրականացման ընթացքում ստացված բողոքների և դրանց լուծման մշտադիտարկում:
- Վերաբնակեցումից հետո կենսամակարդակի կարգավիճակը:

- Կենսամակարդակի բարելավման միջոցառումների արդյունավետ իրականացում:
- Սոցիալական ուսումնասիրություն/ մարդահամարի կրկնում, որպեսզի պարզվի, թե արդյոք մարդիկ կարողացել են վերականգնել իրենց կենսամակարդակը:

Շինարարական աշխատանքներից հետո պետք է մոնիտորինգ անցկացվի անկախ խորհրդատուի կողմից, որպեսզի ստուգվի վճարված փոխհատուցումների համարժեքությունը և վերաբնակեցման արդյունավետությունը: Խորհրդատուի կողմից կպատրաստվի հատուկ հաշվետվություն և կներկայացվի ՀԲ դիտարկման և հաստատման:

6. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Համաձայն Համաշխարհային բանկի քաղաքականության պահանջի պոտենցիալ տեղահանվողները տեղեկացնում են ծրագրի վերաբնակեցման խնդիրների վերաբերյալ ծրագրի վաղ փուլում և ծրագրի նախագծման ժամանակ հաշվի է առնում իրենց տեսակետները: Ըստ հավասարության սկզբունքի՝ ՎԳԾ-ները պետք է պատրաստվեն ծրագրի ազդեցության բոլոր կրողների հետ հանրային քննարկումների գործընթացի միջոցով:

Մասրիկ 1 ՖԿ-ի համար Սոցիալական համալիր ստուգման շրջանակներում կազմակերպվել են հանրային լսումներ, որոնց մասնակցել են համայնքապետը, հավանական ԱԵԱ-ները և այլ շահառուները, և որոնց տեղեկություններ են հաղորդվել ծրագրի, ժամանակացույցի, հնարավոր ազդեցությունների ու փոխհատուցման ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև արևային կայանի կառուցման համար համայնքային հողի նվիրատվության մասին:

Լսումների ընթացքում համայնքի անդամներին ներկայացվել են Ծրագրի փուլերը և պայմանները, հնարավոր բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, հողի նվիրատվության վերաբերյալ մանրամասները, ինչպես նաև այն ազդեցությունները, որոնք կարող են ծագել օդային հաղորդալարերի ու մուտքի ճանապարհների կառուցման ընթացքում: Հատուկ ուշադրության են արժանացել համայնքի այն անդամները, ովքեր կենդանիներ են պահում և օգտվում են արոտավայրերից՝ հասկանալու համար նրանց դիրքորոշումը համայնքային արոտավայրի նվիրատվության առնչությամբ և ծրագրի հավանական դրական ու բացասական ազդեցությունները համայնքի վրա ու, մասնավորապես, իրենց գյուղատնտեսական գործունեության վրա: Ընդհանուր առմամբ, համայնքի 13 բնակիչ է մասնակցել հանրային լսումներին: Մինչդեռ, համայնքի 26 անդամ մասնակցել է ՀՏՀ և ՖԽ-ին (լսումների հայտարարությունը, բաժանված տեղեկատվական թերթիկները և լսումների արձանագրությունները կցված են սոցիալական համալիր ստուգման հաշվետվությանը Մասրիկ 1 ՖԿ-ի համար): Սույն ՎԲՇ-ի շրջանակներում մշակված ԲԼԽ-ը ներկայացվել է համայնքի անդամներին հանրային լսումների ընթացքում, ինչպես բանավոր, այնպես էլ այդ մասին տեղեկատվությունը ներառվել է բաժանված տեղեկատվական թերթիկների մեջ՝ նշելով համապատասխան կոնտակտային տվյալները: Հանրային իրազեկման արձանագրությունը կցված է Հավելված 9.7-ում:

Վերջնական ՎԲՇ կթարգմանվի հայերեն և կիրապարակվի ՀՎԷԷ հիմնադրամի կայքում 1 շաբաթյա ժամկետով, որից հետո ազդակիր բոլոր համայնքների ՏԻՄ գրասենյակներում կանցկացվեն հանրային քննարկումներ: Թարմացված ՎԲՇ-ի տպված տարբերակը նույնպես կուղարկվի ազդակիր համայնքների ՏԻՄ գրասենյակներ:

Հողաչափման աշխատանքների մեկնարկի մասին որոշման ընդունումից հետո պետք է սկսել հանրային իրազեկում և ծրագրի ազդեցության կրողների ներգրավում: Այդ պահին նաև պետք է սկսվեն ՎԳԾ նախապատրաստման աշխատանքները: ՎԳԾ պատրաստման սկզբնական փուլում պետք է կազմել նաև հանրային քննարկումների և հրապարակման ծրագիր (ՀԲՀԾ):

Անհրաժեշտ է ծրագրի մասին տեղեկացնել համապատասխան շրջանների, քաղաքների և համայնքների ղեկավար մարմիններին: Կարևոր է ստուգել ծրագրի հետ կապված

գործողությունների իրականացման համար առկա մարդկային ռեսուրսները և, անհրաժեշտության դեպքում, մեծացնել աշխատակիցների թիվը և/կամ կազմակերպել դասընթացներ:

- Անհրաժեշտ է հաշվի առնել առաջարկվող մեղմացման միջոցառումների վերաբերյալ ազդեցության կրողների տեսակետները, մտահոգությունները և առաջարկությունները:
- Համայնքների ղեկավարները կարևոր դեր ունեն Ծրագրում: Նրանք պետք է տեղեկացված լինեն ծրագրի բոլոր փուլերի մասին, համագործակցեն նախագծողի հետ և պետք է վերաբնակեցման և բողոքների լուծման հանձնաժողովի անդամ լինեն: Այնուամենայնիվ տեղեկատվության հրապարակումը չպետք է սահմանափակվի միայն համայնքի ղեկավարով, այլ նաև պետք է օգտագործվեն համայնքային հիերարխիայից չկախված խողովակներ:
- ՕԳ-երի նախնական ուղեգծերը պետք է ուղարկվեն ազդակիր համայնքների ՏԻՄ գրասենյակներ և քննարկվեն ազդակիր ամեն համայնքում՝ հանրային քննարկումների միջոցով:
- ԾԱԱ-երը կտեղեկացվեն առողջության և անվտանգության հետ կապված հարցերի մասին, այսինքն՝ էլեկտրահարվելու ռիսկի, էլեկտրական և մագնիսական դաշտի (ԷՄԴ) և մինիմալ հեռավորության մասին, որը պետք է պահպանվի (եզրային հաղորդալարից 20 մ լայնությամբ անվտանգության գոտի 110կՎ ՕԳ-ի համար, ԷՄԴ անվտանգ հեռավորություն՝ 7մ):
- Շահագրգիռ մարմիններում ծրագրին առնչվող բոլոր աշխատակիցները պետք է ծրագրի մասին տեղեկացված լինեն (մշակութային ժառանգության տեղական վարչություն, բնապահպանական վարչություն, գյուղատնտեսական վարչություն, կադաստրի գրասենյակներ և այլն):
- Հանրային իրազեկման և տեղեկատվական միջոցառումները պետք է անցկացվեն աշխատանքային նախագծերի պատրաստմանը զուգընթաց և դրանից հետո համապատասխան վայրերում հարկավոր է մարդահամար անցկացնել և ցուցակագրել ծրագրի ազդեցությանն ենթակա սեփականությունը և հնարավոր կորուստները:
- ԾԱԱ-երը պետք է տեղեկացված լինեն վերջնաժամկետի մասին, որպեսզի նրանք հասկանան, որ սահմանված ամսաթվից հետո էլեկտրահաղորդման գծի միջանցքում կատարվող նոր շինարարության դիմաց փոխհատուցում չի տրվելու: ԾԱԱ-երը կտեղեկացվեն վերջնաժամկետի մասին ուսումնասիրության աշխատանքների մեկնարկից մեկ շաբաթ առաջ: Այդ մասին հայտարարությունը կփակցվի ՏԻՄ գրասենյակներում:
- ԾԱԱ-երը պետք է տեղեկացված լինեն բողոքների ընդունման և դիտարկման մեխանիզմների մասին:
- ԾԱԱ-երը կտեղեկացվեն ծրագրի, ժամանակացույցի, փոխհատուցում ստանալու իրավունքի, գնահատման մեթոդաբանության և օտարման գործընթացի մասին: Հանրային տեղեկատվության բրոշյուրը, որտեղ կնշվի վերջնաժամկետը, առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը, իրավունակության չափանիշները, փոխհատուցման պայմանները, բողոքների լուծման ընթացակարգը

կտրամադրվի յուրաքանչյուր ազդակիր տնային տնտեսությանը: Այս նյութերը, ինչպես նաև ՎԲՇ հայերեն տարբերակը կտրամադրվեն ՏԻՄ գրասենյակներին որպեսզի հասանելի լինեն բոլոր ԾԱԱ-երի և/կամ համայնքի անդամների համար:

- Խոցելի ԾԱԱ-երը (բոլոր տնային տնտեսությունները, որոնք ղեկավարվում են կանանց կամ տարեց անձանց կողմից, և աղքատության շեմից ցածր բոլոր տնային տնտեսությունները) իրավունք ունեն անհատական աշխատակից ունենալու (իրավաբան կամ սոցիալական մասնագետ): Այս անձինք պետք է ընտրվեն և ներկայացվեն ԾԱԱ-երին առանց նրանց կողմից որևէ լրացուցիչ գործողություններ անելու:

ՎԳԾ-ն պետք է թարգմանվի հայերեն և հասանելի լինի ծրագրի ազդեցության հնարավոր կրողների և այլ շահագրգիռ կողմերի համար, լինի մատչելի հատկապես ծրագրի իրականացման աշխարհագրական տարածքներում:

Ազդակիր գյուղերի համայնքները պետք է խորհրդակցվեն ծրագրի նախագծման և իրականացման փուլերում: Տեղեկատվությունը ներառում է բոլոր փաստաթղթերը և քարտեզները, ինչպես նաև տեղեկատվական բրոշյուրները: ԾԱԱ-երի և այլ շահագրգիռների հետ Ֆոկուս խմբերը խորհուրդ են տրվում որոշ ազդակիր համայնքներում:

Փաստաթղթերը պետք է հրապարակվեն առնվազն 20 օրով, որպեսզի բոլոր շահագրգիռ կողմերը և ծրագրի ազդեցության պոտենցիալ կրողները կարողանան ՎԳԾ վերաբերյալ ներկայացնել իրենց դիտողություններն ու մեկնաբանությունները:

7. ԾԱԽՍԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Բանկի միջոցները չեն կարող օգտագործվել վերաբնակեցման ծախսերը փակելու համար, վերջիններս պետք է վճարվեն Կառավարության կամ Ներդրողի հաշվին: Բավարար ելակետային տվյալներ առկա չեն արևային կայանի կառուցման հետևանքով ազդեցության փոխհատուցման համար ծախսերի գնահատումն իրականացնելու նպատակով : Այնուամենայնիվ, բացի 97.4 հա տարածքից, Մասրիկ 1 արևային կայանի կառուցման համար ազդեցության ենթարկված հողերի համար փախհատուցումը պետք է իրականացվի Ներդրողի կողմից, եթե այլ համաձայնագրեր չեն ձեռք բերվում Ներդրողի ու Կառավարության միջև:



8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

8.1. Իրավունքների և փոխհատուցումների մատրիցա

ՀՀ.	Ազդեցության կատեգորիա	ԾԱԱ կատեգորիա	Փոխհատուցում
1	Գյուղատնտեսական հողամաս	Օրինական սեփականատերեր	<p>(i) դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելավճար: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԾԱԱ-ի համար գումարած 15 տոկոս հավելավճար, կամ</p> <p>(ii) նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտոր, որն ընդունելի է ԾԱԱ-ի համար:</p> <p>Փոխհատուցումը չի նվազեցվի գործարքի և գրանցման ծախսերով:</p>
		Օրինականացման ենթակա ԾԱԱ-եր	Կգրանցվեն որպես օրինական վարձակալ/սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական վարձակալ/սեփականատեր:
		Օրինականացման ոչ ենթակա ԾԱԱ-եր	Օրինականացման ոչ ենթակա ԾԱԱ-երը ովքեր չեն կարող օրինականացվել կամ, ովքեր օգտագործում են ազդեցության ենթակա հողակտորը առանց պաշտոնական իրավունքների (չգրանցված օգտագործող/ոչ պաշտոնական վարձակալ), կփոխհատուցվեն միայն այն բարելավումների համար, որոնք առկա են ազդեցության ենթակա հողակտորի վրա:



ՀՀ.	Ազդեցության կատեգորիա	ԾԱԱ կատեգորիա	Փոխհատուցում
		Վարձակալներ	Վարձակալները կարող են սեփականության իրավունք ձեռք բերել, օրենքով սահմանված կարգով, և փոխհատուցվել որպես սեփականատեր; կամ նրանք կարող են հնարավորություն ստանալ նոր վարձակալություն ձևակերպել՝ ըստ հողի սեփականատիրոջ հետ համաձայնագրի: Եթե դա հնարավոր չէ, ԾԱԱ փոխհատուցում կստանա, որը հավասար է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) + 15%՝ հետևյալ համամասնությամբ՝ ըստ վարձակալության երկարության. i) < 1 տարի 5%, 2) <15 տարի 14%; 3) տարի 20%; 4) >25 տարի 25%:
2	Ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր	Օրինական սեփականատերեր	Դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելավճար: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա՝ տեղափոխման հող՝ նույն համայնքի վարչական սահմաններում և նույն արժեքով/արտադրողականությամբ, որն ընդունելի է ԾԱԱ-ի համար կամ դրամական փոխհատուցում տեղափոխման հողի արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելավճար:
Օրինականացման ենթակա ԾԱԱ-եր		կգրանցվեն որպես օրինական վարձակալ/սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական վարձակալ/սեփականատեր:	
Օրինականացման ոչ ենթակա ԾԱԱ-եր		Օրինականացման ոչ ենթակա ԾԱԱ-երը ովքեր չեն կարող օրինականացվել կամ, ովքեր օգտագործում են ազդեցության ենթակա հողակտորը առանց պաշտոնական իրավունքների (չգրանցված օգտագործող/ոչ պաշտոնական վարձակալ), կփոխհատուցվեն միայն այն բարելավումների համար, որոնք առկա են ազդեցության ենթակա հողակտորի վրա:	
Վարձակալներ		Վարձակալները կարող են սեփականության իրավունք ձեռք բերել, օրենքով սահմանված կարգով, և փոխհատուցվել որպես սեփականատեր; կամ նրանք կարող են հնարավորություն ստանալ նոր վարձակալություն ձևակերպել՝ ըստ հողի սեփականատիրոջ հետ համաձայնագրի: Եթե դա հնարավոր չէ, ԾԱԱ փոխհատուցում կստանա, որը հավասար է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) + 15%՝ հետևյալ համամասնությամբ՝ ըստ վարձակալության երկարության. i) < 1 տարի 5%, 2) <15 տարի 14% ; 3)տարի 20%;4) >25 տարի 25%:	



ՀՀ .	Ազդեցության կատեգորիա	ԾԱԱ կատեգորիա	Փոխհատուցում
6	Բերք	Բոլոր ԾԱԱ-երը	<p>Կորցված բերքի դիմաց դրամական փոխհատուցումը հաշվարկվում է որպես մեկ տարվա (Այն դեպքերում, երբ ազդակիր հողամասը ցանված է օգտակար բույսով, որը աճում է մի քանի տարի, առանց յուրաքանչյուր տարի վարելու ու ցանելու անհրաժեշտության, և որը վնասվել է ծանր մեքենայի անցման արդյունքում, ապա փոխհատուցումը հավասար կլինի երեք տարվա համախառն բերքի շուկայական արժեքին) համախառն բերքի շուկայական արժեք: Բերքի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի վարձակալներին, այնպես էլ սեփականատերերին՝ հաշվի առնելով երկուսի միջև բնավարձակալության գործող պայմանագիրը: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք կունենան ստանալ փոխհատուցում՝ համաձայն ՔԳ 4.03՝ նույն պայմաններով, ինչ վարձակալները:</p>
7	Ծառեր	Բոլոր ԾԱԱ-երը	<p>Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Ծառերը/ թփեր կգնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված նրանից դեկորատիվ են, թե բերքատու.</p> <ul style="list-style-type: none"> • Ոչ մրգատու ծառեր/թփեր՝ փայտանյութի և դեկորատիվ ծառերը կգնահատվեն հետևյալ խմբերին համապատասխան. (ա. փոքր ծառեր; բ. միջին մեծության ծառեր և գ. մեծ ծառեր)՝ հիմնվելով ծառի տեսակի և գնահատման հետևյալ ցուցանիշների վրա՝ փայտանյութի (որպես վառելանյութ կամ շինանյութ) ծավալ, ծառի/թփի բարձրություն, ինչպես նաև ծառերի համար ՀՕՏԾ-ով որոշվող այլ չափանիշների հիման վրա: • Մրգատու ծառերը (թփեր, խաղողի այգիներ) կգնահատվեն՝ հիմնվելով տնկման տարիքի վրա: Մրգատու ծառերի (թփեր, խաղողի այգիներ) համար փոխհատուցումը կվճարվի՝ հիմնվելով ներդրման արժեքի և 1 տարվա համար տվյալ ծառի/թփի շուկայական արժեքի հիման վրա՝ բազմապատկելով այն տարիների քանակով, որոնք անցել են տնկման ամսաթվից հետո, սակայն ոչ ավել, քան այն տարիների քանակը, որն անհրաժեշտ է նոր մրգատու ծառ/թուփ աճեցնելու համար:
10	Զգալի վնասների նպաստ	Զգալի վնաս կրող ԾԱԱ-երը	<p>Դրամական կանխիկ փոխհատուցում կտրամադրվի Ծրագրի այն ՏՏ-ներին, ներառյալ վարձակալներին ու իրական հողօգտագործողներին, որոնց սեփականություն հանդիսացող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական հողերի 10%-ը կամ ավելին ազդեցության է ենթարկվում , և ովքեր հողօգտագործման արդյունքում բերք են ստանում: Գյուղատնտեսական հողերի 10% կամ ավելի կորստի ազդեցություն ունեցող</p>



			ԾԱԱ-ները լրացուցիչ փոխհատուցում են ստանալու՝ ազդեցության ենթակա հողակտորից ստացվող 1 տարվա բերքին համապատասխան: Վերոնշյալ նպաստի հաշվարկը հիմնված է հողերի օգտագործման իրական նպատակի վրա՝ անկախ կադաստրում, պետական գրանցման վկայականում կամ հողի նկատմամբ իրավունքի մասին վկայող այլ փաստաթղթերում նշված օգտագործման նպատակից:
11	Խոցելիության նպաստ	Խոցելի ԾԱԱ-երը /աղքատության շեմից ներքև գտնվող ԾԱԱ-եր	Սոցիալապես խոցելի խմբերին (աղքատության շեմից ներքև և այրիների կամ տարեցների գլխավորությամբ տնային տնտեսությունների) կտրամադրվի վերականգնման նպաստ, որը հավասար է նվազագույն աշխատավարձի՝ 55000 ՀՀ դրամ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) վեցապատիկին և նախապատվություն ծրագրի իրականացման հետ կապված թափուր աշխատատեղերի համալրման ժամանակ:

8.2. Մարդահամարի տեղեկատվության հարցաթերթիկ

Անձինք:

Յուրաքանչյուր ազգակիր կատեգորիայի անձանց և տնային տնտեսությունների ընդհանուր քանակությունը:

Յուրաքանչյուր անձի տարիքը, սեռը, զբաղմունքը

Գույք:

- Անձնական գույք՝ ներառյալ սեփականության ձևի մանրամասներ
- Շինություններ՝ տներ, գոմեր, խանութներ, արտադրական շինություններ, հացահատիկի չորացման տարածքներ, զուգարաններ
- Հողամաս՝ ջրվող կամ անջրդի, անտառային տարածքներ, խոտածածկ, չօգտագործված հողատարածքներ և այլն: Նկարագրությունը և հողամասի վրա առկա մշակաբույսերի արժեքի գնահատականը:
- Այլ՝ կենդանիներ, բարիքներ, ծառեր:

Պետական և համայնքային սեփականություն

- Հողամաս՝ գյուղական սովորական հողեր, վարելահողեր և արոտավայրեր, ձկնորսության համար նախատեսված տարածքներ և այլն:
- Շինություններ և սարքավորումներ՝ դպրոցներ, առողջապահական հաստատությունները, գերեզմանոցներ, համայնքային կենտրոններ, հասարակական տրանսպորտ, բանկեր:
- Ենթակառուցվածքներ՝ խմելու եւ այլ ջրային համակարգեր, մարզային և համայնքային ճանապարհներ, էլեկտրաէներգիայի և այլ հզորության աղբյուրներ:

Այլ աղբյուրներից ԾԱԱ եկամուտեր, ներառյալ՝

- Ֆերմերային գործունեությունից ստացված
- Ոչ ֆերմերային գործունեությունից ստացված
- Չգրանցված ոլորտի զբաղմունքներ

Աղբյուր՝ India Resettlement Handbook, World Bank, 1995, p. 39

8.3 Մասրիկ 1 արևային կայանի համար Սոցիալական համալիր ստուգման ամփոփում

Նախապատմություն

Մեծ Մասրիկ համայնքը (Գեղարքունիքի մարզ) ընտրվել է Մասրիկ 1 արևային ՖՎ կայանի կառուցման նպատակով: Տարածքը գտնվում է համայնքային հողերի վրա, որոնք ներկայումս

օգտագործվում են որպես կենդանիների համար արոտավայր: ՀՎԷԷ Հիմնադրամը առաջարկում է ստանալ 97.4 հա համայնքային հողը (այսուհետ՝ Մեծ Մասրիկ 1 Համայնքային հող) որպես համայնքի նվիրատվություն և ապա այն փոխանցել հաղթող հայտատուին: Վերջինս պետք է համայնքին փոխանցի 80 միլիոն ՀՀ դրամ տեղական տարածքային զարգացման վճար՝ շնորհման նամակի հրապարակումից հետո 20 օրվա ընթացքում: Ծրագրի համար առաջարկվող այս տարածքը (97.4 հա) հանդիսանում է Մեծ Մասրիկ համայնքի ավելի խոշոր հողակտորի մասը: Այնուամենայնիվ, այն արդեն առանձնացվել է համայնքային հողից, իսկ պետական կադաստրում նրա կատեգորիան պետք է փոխվի: ՀՎԷԷՀ նաև ներառել է չափագրողի, ով սամնանանիշեր է տեղադրել՝ հողի այդ հատվածը սահմանազատելու համար:

ՖՎ կայանի կառուցման վերաբերյալ ՀՎԷԷՀ մասնագետների հետ մի քանի քննարկումների ընթացքում, որին մասնակցել են Մեծ Մասրիկ համայնքի ղեկավարը, ինչպես նաև համայնքի խորհրդի անդամները, համայնքը պատրաստակամություն է հայտնել նվիրաբերել հայանքի սեփականություն հանդիսացող արոտավայրը ՀՎԷԷՀ -ին՝ առաջարկվող կայանի կառուցման համար, ինչը փաստագրվելու է համայնքի խորհրդի որոշմամբ և հողի նվիրատվության համաձայնագրով:

Համալիր ստուգման շրջանակը և կիրառված մեթոդաբանությունը

Սոցիալական անվտանգության համալիր ստուգման շրջանակներում, հիմնվելով հավաքագրված տվյալների վրա, իրականացվել է հետևյալ վերլուծությունը.

Ծրագրի բոլոր ազդեցությունների (դրական ու բացասական) վերլուծություն ու գնահատու)

Կյանքի ստանդարտների ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա ակնկալվող ազդեցությունների վերլուծություն, հատկապես, որոնք վերաբերվում են անհատների ու համայնքի եկամուտներին, ապրուստին ու աշխատանքով ապահովմանը

Տարբեր խմբերի վրա ազդեցությունների ակնկալվող ծանրությունը

Նվիրաբերված արոտավայրի արդյունավետության վերլուծություն՝ որոշելով բերքատվությունը և արածող կենդանիների ծավալները և այլընտրանքային արոտավայրերի առկայությունը

Մեղմացնող միջոցառումների վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ և տարբերակներ ՀՎԷԷՀ -ի համար բացասական ազդեցությունները նվազեցնելու ու մեղմացնելու համար (օրինակ՝ համայնքային արոտավայրերը ավելացնելու տարբերակներ)

Սոցիալական անվտանգության համալիր ստուգման շրջանակներում իրականացվել են հետևյալ վերլուծությունները.

- 1) Ծրագրի փաստաթղթերի ու համապատասխան կանոնակարգերի վերանայում ու վերլուծություն (իրավական շրջանակներ)
- 2) կադաստրային տեղեկատվության վերլուծություն
- 3) նվիրաբերվող հողի շուկայական արժեքի վերլուծություն
- 4) արևային կայանի համար առաջարկվող հողի արդյունավետության գյուղատնտեսական վերլուծություն

- 5) Մեծ Մասրիկ համայնքի սոցիալ-տնտեսական պրոֆիլի վերլուծություն
- 6) Հանրային լսումների կազմակերպում
- 7) Հիմնական տեղեկատու հարցազրույցներ և ֆոկլուս խմբերի քննարկումներ ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ու շահառուների հետ

Ծրագրի համար կիրառված հողի նվիրատվության ընթացակարգերը

Ծրագրի ներքո կիրառված հողի նվիրատվության հիմնական կանոնակարգերը, ինչպես նաև ժամանակացույցը ներկայացված են ստորև աղյուսակում.

N	Գործընթաց, գործողություն	Կարգավիճակ	Ավարտման ժամկետ	Նշումներ
1	Հողի նվիրատվության մասին ՀՀ կառավարության որոշման հաստատում	Հողի նվիրատվության մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը շրջանառվել է պետական կազմակերպություններում և հաստատվելու է կառավարության կողմից բոլոր անհարժեշտ ընթացակարգերի ավարտից հետո (ՀՀ որոշման շրջանառումը բոլոր շահառու պետական մարմինների միջև, Արդարադատության նախարարության Եզրակացությունը, ՀՀ կառավարության հաստատումը):	ապրիլ, 2018թ.	ՀՀ կառավարության որոշման նախագիծը կցված է Հավելված 9-ում
2	Հողի նվիրատվության համաձայնագրի ստորագրում համայնքի և ՀՎԷԷՀ-ի միջև	Հողի նվիրատվության համաձայնագիրը մշակվել է ՀՎԷԷՀ-ի կողմից: Այն ստորագրվելու է ՀՀ կառավարության որոշման հաստատումից հետո:	ՀՀ կառավարության որոշման հաստատումից հետո	Հողի նվիրատվության համաձայնագրի նախագիծը կցված է Հավելված 10-ում
3	Հողի փոխանցման համաձայնագրի ստորագրում ընտրված ներդրողի ու ՀՎԷԷՀ-ի միջև	Հողի փոխանցման համաձայնագիրը մշակվել է ՀՎԷԷՀ-ի կողմից, որը կստորագրվի կողմերի միջև Ներդրողի ընտրությունից հետո	Ներդրողի ընտրությունից հետո	Հողի փոխանցման համաձայնագրի նախագիծը կցված է Հավելված 11-ում
4	Մեծ Մասրիկ համայնքի հաշվին վերջինիս	Համայնքի զարգացման համար սահմանված վճարը պետք է փոխանցվի Ներդրողի կողմից	Գումարի փոխանցումը նախապայման է	

	զարգացման համար սահմափակ վճարի փոխանցում	նախքան Կառավարության աջակցության համաձայնագրի կնքումը	Կառավարության աջակցության համաձայնագրի ստորագրման համար	
5	Հողի փոխանցումը Ներդրողին	<ul style="list-style-type: none"> ՀՎԷԷՀ-ը, ՀՀ կառավարության ու Մասրիկ 1 արևային ՖՎ կայանի Ներդրողի միջև Հողի փոխանցման համաձայնագրի և Կառավարության աջակցության համաձայնագրի կնքումից հետո, պետք է հողը փոխանցի Ներդրողին Հողի փոխանցումը համայնքին կատարվելու է՝ հիմնվելով ՀՎԷԷՀ-ի և Ներդրողի միջև Փոխանցման ակտի վրա 	Նշված համաձայնագրերի կնքումից հետո 10 օրերի ընթացքում	

Հանրային լսումներ

Մասրիկ 1 ՖՎ-ի համար Սոցիալական համալիր ստուգման շրջանակներում կազմակերպվել են հանրային լսումներ, որոնց մասնակցել են համայնքապետը, հավանական ԱԵԱ-ները և այլ շահառուները, և որոնց տեղեկություններ են հաղորդվել ծրագրի, ժամանակացույցի, հնարավոր ազդեցությունների ու փոխհատուցման ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև արևային կայանի կառուցման համար համայնքային հողի նվիրատվության մասին: Լսումների ընթացքում համայնքի անդամներին ներկայացվել են Ծրագրի փուլերը և պայմանները, հնարավոր բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, հողի նվիրատվության վերաբերյալ մանրամասները, ինչպես նաև այն ազդեցությունները, որոնք կարող են ծագել օդային հաղորդալարերի ու մուտքի ճանապարհների կառուցման ընթացքում: Հատուկ ուշադրության են արժանացել համայնքի այն անդամները, ովքեր կենդանիներ են պահում և օգտվում են արոտավայրերից՝ հասկանալու համար նրանց դիրքորոշումը համայնքային արոտավայրի նվիրատվության առնչությամբ և ծրագրի հավանական դրական ու բացասական ազդեցությունները համայնքի վրա ու, մասնավորապես, իրենց գյուղատնտեսական գործունեության վրա: Համայնքի 26 անդամ մասնակցել է ՀՏՀ և ՖԽ-ին: Այսպիսով, ընդհանուր առմամբ 39 համայնքի անդամ է խորհրդատվություն ստացել, որոնցից 8՝ կանայք (20%):

Եզրակացություններ

1. Համայնքի զարգացման համար սահմափակ վճարը պետք է փոխանցվի Ներդրողի կողմից նախքան Կառավարության աջակցության համաձայնագրի կնքումը և նախքան հողի փոխանցումը ներդրողին:

2. Համայնքի անդամների 55.3 % (2000)-ը ներգրավված են գյուղատնտեսական գործունեության մեջ: Որի հիմնական ոլորտը մշակաբույսերի մշակում է և հարակից գյուղատնտեսական աշխատանքները, և միայն դրանից հետո՝ անասնապահությունը:

3. Համայնքի անասնապահությամբ զբաղվողները կարող են բաժանվել երկու խմբի՝ առաջին խմբի համար անասնապահությունը եկամտի հիմնական աղբյուր է, որը կազմում է համայնքի ընդհանուր 915 SS-ների 2%-ը (18 SS-ներ): Այսինքն, գյուղացիներ, ովքեր աշխատանքային հնարավորություններ են նաև ապահովում համայնքի այլ անդամների համար: Իսկ երկրորդ խումբը ներառում է մարդկանց, ում համար անասնապահությունը միայն իրենց ընտանիքի կարիքների համար է. SS-ների ընդհանուր թվի 40%-ը (367 SS-ներ): Համայնքի անդամների մեծամասնության համար անասնապահությունը սնունդ ստանալու միջոց է, և միայն փոքր խմբի համար այն հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր, ինչը, այնուամենայնիվ, աջակցության կարիք ունի՝ զարգացման ու արդյունավետության տեսանկյունից:

4. Անասնապահությունը կարող է արդյունավետ լինել համայնքի բնակիչների համար միայն, եթե այն դառնում է նրանց բիզնեսը, այսինքն՝ անասնաբուծական ֆերմա, որը գործում է համապատասխան կանոնների ներքո: Սա ենթադրում է իր սեփական աշխատանքային ցիկերը, որոնք շահույթ են բերում, իսկ ամենակարևոր գործոնը հանդիսանում է համապատասխան արոտավայրերի առկայությունը: Այս առումով, հարևան համայնքների արոտավայրերը օգտակար կարող են լինել: Դրանք օգտագործվում են ամռանը Մեծ Մասրիկ համայնքի բնակիչների կողմից համապատասխան վճարի դիմաց: Անասնապահության զարգացման ու արդյունավետության խոչընդոտ է հանդիսանում նաև համայնքից հեռու գտնվող արոտավայրերում մարդկանց մնալու ու աշխատելու համար պայմանների բացակայությունը, ինչպես նաև կաթի մթերման ցածր շուկայական արժեքը: Դա չի արդարացնում ծանր աշխատանքը, այսինքն՝ կաթը մթերվում է այնքան ցածր գներով, որ այն չի արդարացնում կատարված ծախսերն ու ջանքերը: Այդ իսկ պատճառով, ոլորտը զարգացնելու խթան չի լինում:

5. Համայնքի հողերի մեծամասնությունը վարելահողեր են (մետ 70%): Այսպիսով, մեկ այլ կարևոր գործոնը մշակաբույսերի ու բանջարեղենի մշակումն է, իսկ դրանց վաճառքը հանդիսանում է համայնքի բնակիչների մեկ այլ հիմնական գործունեություն (հիմնականում սեփական SS-ներ): Սա նշանակում է, որ նրանք օգտագործում են ստացված ապրանքը իրենց SS-ների կարիքների համար, իսկ ապրանքի մի մասն էլ փոխանակվում կամ վաճառվում է: Համայնքի խորհրդի ղեկավարի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ վարելահողերը հիմնականում ամբողջությամբ մշակվում են:

6. Արոտավայրը ընդհանուր հողի 12.9% է կազմում (465 հա, ներառյալ՝ նվիրաբերված հողակտորը), ուստի, նվիրաբերված 97.4 հա հողը հավասար է ընդհանուր վարելահողերի 20.9% և համայնքին պատկանող ընդհանուր հողերի 2.7%:

7. Համայնքի բնակչության մեծամասնությունը, ովքեր պահում են քիչ գլխաքանակով խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, իրենց անասուններին արածեցնում են ֆոտովոլտային կայանի կառուցման համար նվիրաբերված և դրան հարակից արոտավայրերում, քանի որ դա գյուղի ենթակայության տակ գտնվող միակ մոտ արոտավայրն է: Համայնքն ունի նաև հեռագնա

արոտավայրեր, ուր իրենց անասուններին արածեցնելու են տանում հիմնականում այն անասնապահները, ովքեր պահում են շատ անասուններ, այսինքն ֆերմերները: Սակայն, ինչպես պետք է նշվել, որ չկա հեռագնա արոտավայր տանող բարվոք ճանապարհ և չկան համապատասխան պայմաններ, ինչը մեծ խոչընդոտ է անասնապահության իրականացման համար:

8. Նվիրաբերված արոտավայրը «կորցնելուց» հետո համայնքի բնակիչները կօգտվեն դրան հարակից արոտավայրերից, համայնքին պատկանող հեռագնա արոտավայրերից, ինչպես նաև կշարունակեն օգտվել հարևան համայնքների արոտավայրերից: Հաշվի առնելով արդեն ֆիքսված այն հանգամանքը, որ նվիրաբերված արոտավայրից հիմնականում օգտվում են քիչ գլխաքանակով անասուններ ունեցող համայնքի բնակիչները՝ հստակորեն տարանջատվում է անասնապահների երկու խումբ. առաջին խումբը հիմնականում չէր օգտվում նվիրաբերված արոտավայրից, քանի որ ապրում է Մեծ Մասրիկ համայնքի այն հատվածում, որը հարակից է հարևան համայնքի և դրան պատկանող արոտավայրերի հետ: Հետևաբար, այս խումբն իր անասուններին այսպես, թե՛ այնպես արածեցնում էր հարևան համայնքի արոտավայրերում, և նիրաբերված արոտավայրից օգտվելու անհնարինությունը որևէ կերպ չի անհանգստացնում այս խմբի ներկայացուցիչներին: Երկրորդ խմբում ներգրավված են այն անասնապահները, ովքեր բնակվում են Մեծ Մասրիկ համայնքի այն հատվածում, որտեղից իրենց անասուններին տանում են արածեցնելու նվիրաբերվող և հարակից արոտավայրերում, և սրանք են ծառայում որպես հիմնական արոտավայր:

9. Համաձայն գնահատողի եզրակացության՝ նվիրաբերված գյուղատնտեսական հողի (արոտավայր) շուկայական արժեքը կազմում է 19.468.180 ՀՀ դրամ, մինչդեռ դրա կադաստրային արժեքը՝ 73.005.675 ՀՀ դրամ է: Համայնքի զարգացման վճարը, որը փոխանցվելու է համայնքին, 80 մլն ՀՀ դրամ է, ինչը մի փոքր ավել է, քան հողակտորի կադաստրային արժեքը և մոտ 4 անգամ ավել է, քան հողակտորի շուկայական արժեքը:

10. Մեծ Մասրիկ համայնքում կանայք հիմնականում ներգրավված են անասնապահության մեջ, սակայն նրանց պարտականությունները սահմանափակվում են կաթ կթելով և դրանից բազմազան կանթամթերքներ՝ թթվասեր, մածուն, պանիր, կարագ, կաթնաշոռ, ռեժան ստանալով: Կանայք ներգրավված են նաև ստացված կաթնամթերքների փոխանակման ու վաճառքի գործընթացներում :

11. Համայնքի բնակիչները տեղեկացված են Ծրագրի, դրա նպատակների ու գործառույթների վերաբերյալ, ինչը ցույց է տալիս համայնքի բնակիչների մեծ հետաքրքրվածությունը: Համայնքում ֆոտովոլտային կայանի կառուցումը հնարավորություն կտա այն դարձնել արդյունաբերական կենտրոն, որը աշխատատեղեր կապահովի համայնքի բնակիչների մի մասին, ինչպես նաև տուրիզմի զարգացման հնարավորություններ կընձեռի, քանի որ սա կլինի նման հզորություն ունեցող առաջին կայանը հանրապետությունում, ինչն էլ ուշադրություն կգրավի համայնքի հանդեպ՝ թե՛ ներդրողների, թե՛ զբոսաշրջիկների առումով: Մեծ Մասրիկ համայնքի բյուջեն կունենա տեղական ընկալումներին համապատասխան խոշոր ավելացումներ՝ ֆոտովոլտային կայանի կողմից վճարված հարկերի տեսքով, ինչը ևս կծառայի համայնքի կարիքներին:

12. Այսպիսով, Մասրիկ 1 ՖՎ կայանի կառուցման Ծրագրի դեպքում հողի կամավոր նվիրատվությունը արդարացված է հետևյալ պայմաններով.

- i. Ծրագրի ազդեցությունները չեն հանգեցնում տնային տնտեսությունների տեղափոխման կամ ՏՏ-ների եկամտի ու ապրուստի միջոցների կորստի, ինչը կարելի է տեսնել սոցիալ-տնտեսական հետազոտության մեջ; և
- ii. Ազդեցության ենթակա համայնքը իր պատրաստակամությունն է հայտնում ՀՀ-ին նվիրաբերել ազդեցության ենթակա համայնքի սեփականություն հանդիսացող հողը՝ Ծրագրի իրականացման նպատակով, ինչը նշված է հանրային հանդիպումների արձանագրությունների մեջ;
- iii. Համայնքին խորհուրդ է տրվում օգտվել ՀԶՎ-ից, որը վճարվելու է Ներդրողի կողմից ոչ միայն համայնքի խնդիրները լուծելու համար, այլև հեռագնա արոտավայրերում պայմանները բարելավելու նպատակով:

8.4 Մարդահամարի ձևանմուշ

Տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ հարցման ձև							
Գույքի սեփականատիրոջ անունը.		Գյուղի անունը.		Գնորվելու վայրը ըստ քարտեզի. GPS կորդինատներ ____		Վնասված գույք. (ավելացնել նկարագրություն, օր. 2 հեկ. գյուղացիական նշանակության դաշտ)	
Տնտեսության կազմը							
Ընտանիքի անդամի անունը	Սեռը	Տարիքը	Ընտանիքի գլխավորի հետ կապը	Հիմնական զբաղվածությունը	Երկրորդական զբաղվածությունը	Կրթության մակարդակը	Հիվանդություն կամ հաշմանդամություն
Օրինակ 1	Ար	34	Ընտանիքի գլուխը	Ֆերմեր	Սեզոնային աշխատանք	Ավագ դպրոց	Չունի
Օրինակ 2	Իգ	25	Կինը	Վաճառող	Չունի	Հանրակրթական դպրոց	Չունի
Օրինակ 3	Իգ	7	Դուստրը	Ուսանող	Չունի	Չունի	Չունի
Օրինակ 4	Ար	5	Որդին	Ուսանող	Չունի	Չունի	Չունի
Սեփականաշնորհված արտադրական գույք (պետք է նշել ամբողջ ունեցվածքը, այլ ոչ թե միայն էլեկտրահաղորդման գծում կորցրածը)							
չորոգվող հող(հա)	Հողատիրության կարգավիճակը	Ոռոգվող հող (հա)	Հողատիրության կարգավիճակը	Բերքատու ծառերի քանակը	Այլ ծառերի քանակը	Սեփականաշնորհված և շահագործվող առևտրային կառույցներ	Այլ սեփականաշնորհված կառույցներ
3 հեկ	սեփականատեր	0.5 հա	սեփականատեր	20	2	չունի	1 գոմ
Ընտանիքի տարեկան եկամուտը	Եկամտի աղբյուրը (Չաբաժինը)						
100.000 դրամ	Ագրարային հող	Ոռոգվող հող	Դրամական եկամուտ	Անասուններ	Առևտուր	Սեզոնային աշխատանք	Անտառային հատվածներ
	40%	20%	10%	5%	10%	10%	5%

8.5 Կորուստների և գույքագրման ձևանմուշ

ID	Անուն	Ընտանի ի անդամն ը/ աշխատողն է	Վնասված հող			Վնասված կառույցներ			Վնասված ծառեր		Ազդեցություն գրադվածության վրա			Վերաբնա կեցված		Դրամական նպաստ խոցելի ԱԵԱ համար		Դրամական նպաստ խիստ ազդեցությա ն ենթարկված կարգավիճա կի համար	
			Տեսակը	Սեփակա նաշնորհ ված հատված ը	Վնասվա ծ հատված ը	Տեսա կ	Սենյ ակնե րի քանա կը	Վնասված հատվածը	Տեսա կ	քա նա կ	Տեսակ	Մշտական	Ժաման ակվոր	Այո	Ոչ	Այո	Ոչ	Այո	Ոչ
1	Օրինակ 1	6	Կարտոֆիլի դաշտ	500 ք մ	100 ք մ				Ծիրան	3					ոչ	այո		այո	
	Օրինակ 2	4				քար	1	100			Փոքր խանութ	այո		այո		ոչ		այո	
	Օրինակ 3	2	1.) Կարտոֆիլի դաշտ 2.) Խաղողի այգի	10.000 ք մ 300 ք մ	60 ք մ 100 ք մ										ոչ		ոչ		ոչ
	Օրինակ 4	5	Շինարարությա ն համար նախատեսված հողատարածք	200 ք մ	200 ք մ										ոչ			այո	

8.6 Հանրային քննարկումների և հրապարակման ծրագիր

8.6.1 Նկարագրություն

Հանրային քննարկումների և հրապարակման ծրագրի նպատակն է մշակել հանրային քննարկումների և հրապարակման իրականացվելի ընթացակարգեր, մեխանիզմներ և սկզբունքներ:

Համաձայն Համաշխարհային բանկի ԳՁ 4.03 ուղեցույցների, ԾԱԱ-երին պետք է լիովին խորհրդատվություն տրամադրվի և հնարավորություն տրվի մասնակցելու ՎԳՊ-ն պատրաստելու և իրականացնելու բոլոր փուլերին: Նույն սկզբունքով, ԾԱԱ պետք է պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացվի պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՎԳՊ-ի իրականացման ժամանակացույցի և գործընթացների վերաբերյալ:

Հանրային տեղեկատվական և խորհրդատվական քարոզարշավները պետք է անցկացվեն Ներդրողի կողմից ՎԳՊ-ի իրականացման գործընթացի ամբողջ փուլերի ընթացքում (ինչպես ներկայացված է ստորև՝ 9.6.2 կետում): Ազդեցության ենթարկված կողմերին հնարավորություն կտրվի ներկայացնել իրենց գաղափարները և առաջարկությունները, որպես ներդրում վերաբնակեցման գործողությունների պլանավորման և իրականացման մեջ: Այս հարցով հետաքրքրված տարբեր հասարակական կազմակերպություններ Ներդրողի կողմից ակտիվորեն կընդգրկվեն հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակման մեջ: Բոլոր ԾԱԱ համար Ներդրողը կապահովի հավասար պայմաններ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու հարցերում:

8.6.2 Հանրային քննարկումներ

Ա. Ոչ պաշտոնական հանրային քննարկումներ

ՎԳՊ-ի կազմման գործընթացի ժամանակ ԾԱԱ-ի ներկայացուցիչների և տեղական կառավարման մարմինների հետ ոչ պաշտոնական (Հանրային լսումներ, որոնք չեն կարգավորվում օրենսդրությամբ) լսումներ կանցկացվեն գույքագրող և գնահատող ընկերության կողմից չափման, գույքագրման և մարդահամարի ընթացքում և դրանցից առաջ: ԾԱԱ կտեղեկացվեն վերաբնակեցման վերաբերյալ՝ կապված տեղազննման և ժամանակացույցի հետ:

Բ. Վերջնաժամկետի վերաբերյալ հայտարարություն

Վերջնաժամկետի վերաբերյալ ԾԱԱ կտեղեկացվեն տեղազննումն սկսելուց մեկ շաբաթ առաջ: Հայտարարությունը կփակցվի Տեղական հնքնակառավարման Մարմինների (ՏԻՄ) գրասենյակներում և տեղական թերթերում:

Գ. ՎԳՊ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ

Փոխհատուցման և վերաբնակեցման տեղեկատվության հրապարակման վերաբերյալ ԾԱԱ հետ հանրային քննարկումները կապահովվեն ՀՀ կառավարության նախնական ուսումնասիրության մասին որոշման պահանջների շրջանակներում: Ներդրողը պատասխանատու կլինի այս ՀԲ-ի կազմակերպման համար:

ՎԱՅՐԸ՝ Բոլոր ազդակիր համայնքներում (տես 7 բաժնի աղյուսակը) հանրային քննարկումները կկազմակերպվեն այնպիսի վայրերում, որոնք հասանելի կլինեն ԾԱԱ համար, օրինակ ՏԻՄ գրասենյակում, մշակույթի կենտրոններում, դպրոցներում և այլն: Վայրը կընտրվի և կհամաձայնեցվի ՏԻՄ մարմինների հետ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ մի շարք կազմակերպչական գործողություններ կիրականացվեն նախքան լուումները, դրանք են՝

- Ազդեցության ենթարկված բոլոր համայնքների ղեկավարները պաշտոնապես կձանուցվեն ՀՔ-երի ամսաթվերի և օրակարգի վերաբերյալ և կառաջարկվեն աջակցել կազմակերպչական հարցերով (վայր, ԾԱԱ մասնակցություն):
- ԾԱԱ վերջնական ցանկը մինչև լուումները կուղարկվի համայնքների ղեկավարներին ապահովելու ԾԱԱ կամ նրանց ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց և խոցելի խմբերին՝ ապահովելով նրանց ներկայությունը:
- ՀՔ-երի վերաբերյալ հայտարարությունը պետք է հրատարակվի նախքան ՀՔ-ն սկսելը:
- Հայտարարությունը պետք է հրատարակվի տեղական լրատվամիջոցներում (եթե այդպիսին կա):
- Հայտարարություն ՏԻՄ գրասենյակներում:
- ԻԿ ներկայացուցիչը կզանգահարի ազդեցության ենթարկված տնային տնտեսության յուրաքանչյուր գլխավորին կամ անդամին (եթե հեռախոսահամարներն առկա են) և կհրավիրի նրան, ինչպես նաև ընտանիքի ցանկացած այլ անդամի, ով ցանկանում է մասնակցել:
- ՀԿ-երը (տես 3.1 բաժնի ՀԿ-երի ցուցակը) նույնպես կտեղեկացվեն ՀՔ-երի ժամանակացույցի վերաբերյալ:

ՀՔ-ԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ՝ Հանրային լուումների ժամանակ բոլոր քննարկումները պետք է փաստաթղթավորվեն:

- Հանրային բոլոր լուումները պետք է ձայնագրվեն և պետք է կազմվի հանդիպման արձանագրություն:
- Մասնակիցների ցանկը պետք է ներկայացվի, որպես արձանագրության մի մաս:
- ԾԱԱ կողմից բարձրացված խնդիրների, հանդիման ընթացքում պատասխանած հարցերի և անպատասխան մնացած հարցերի ամփոփ նկարագրություն պետք է կազմվի յուրաքանչյուր ՀՔ-ից հետո: Անհրաժեշտության դեպքում բարձրացված խնդիրները լուծելու համար կկազմվի գործողության պլան: Վերջնական որոշումները պետք է գրանցվեն և տրամադրվեն համայնքներին կամ կոնկրետ ԾԱԱ-երին:
- ՀՔ-երի ժամանակ պետք է լուսանկարներ արվեն:
- ՎԳԾ-ի մեջ կներկայացվի քննարկումների ամփոփումը: Հանդիպման արձանագրությունը կկցվի ՎԳԾ-ին:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԾԱԱ կտեղեկացվեն ծրագրի, ժամանակացույցի, փոխհատուցման վճարումների, գնահատման մեթոդաբանության և հողի ձեռքբերման գործընթացների վերաբերյալ: Հանրային տեղեկատվական գրքույկները վերջնաժամկետի, իրավասության չափանիշների և իրավունքների, փոխհատուցման միջոցների, բողոքների կարգավորման մեխանիզմի գործընթացի հետ միասին կտրամադրվեն ազդեցության ենթարկված յուրաքանչյուր տնային տնտեսությանը: Այս նյութերը, ինչպես նաև ՎԳԾ-ի հայերեն պատճենը նույնպես կտրամադրվի ՏԻՄ մարմիններին, այնպես որ բոլոր վերջինս հասանելի լինի ԾԱԱ և/կամ համայնքների անդամների համար:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝ ՀԲ-երը կիրականացվեն Ներդրողի կողմից: Գնահատող կազմակերպության գնահատման հարցերով մասնագետը կներկայացնի գնահատման մեթոդաբանությունը:

Դ. ՎԳԾ-ի իրականացման և շինարարության ընթացքում ՀԲ-երը

ԾԱԱ հետ լրացուցիչ ոչ պաշտոնական լուսմներ կիրականացվեն ՎԳԾ-ի իրականացման փուլում, մասնավորապես ՎԳԾ իրականացման մասնագետի/խմբի կողմից օտարման պայմանագրի ստորագրման ժամանակ: ԵԿ-ի կողմից նախքան շինարարության սկսելը ՀԲ-եր կկազմակերպվեն բոլոր համայնքների հիմնական բնակչության համար, որպեսզի համայնքների անդամներն տեղեկացված լինեն շինարարության ժամանակացույցի, մոտեցումների, անվտանգության մեխանիզմների և բողոքների կարգավորման մեխանիզմի վերաբերյալ:

8.6.3 Վերաբնակեցման հետ կապված փաստաթղթերի հրապարակումը

ՀԲ-երի ժամանակ Ներդրողը կբաժանի Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական գրքույկներ իրավասության աղյուսակի հետ միասին, որում կներկայացվեն ծրագրի նկարագրությունը, բողոքների կարգավորման մեխանիզմը, իրավասությունները և փոխհատուցումները, ինչպես նաև հաճախակի տրվող հարցերի պատասխանները:

ՀԲ-ի կողմից հաստատվելուց հետո վերջնական ՎԳԾ-ն հայերենով կհրատարակվի մեկ շաբաթվա ընթացքում, ինչը թույլ կտա բոլոր շահագրգիռ կողմերին ուղարկել ՎԳԾ-ի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները և մտահոգությունները:

ՎԳԾ կհրապարակվի՝

- ՏԻՄ գրասենյակներում՝ ԾԱԱ-երի համար
- ԻԿ-ի կայքում

Վերջնական ՎԳԾ հայերեն լեզվով կհրապարակվի Ներդրողի և ՀԲ կայքերում: Հաստատված ՎԳԾ պատճենը նաև հասանելի կլինի տարածքային մարմինների գրասենյակներում և ազդակիր համայնքների ՏԻՄ գրասենյակներում:

8.7 Հանրային իրազեկման հանդիպման արձանագրություն

30.01.2018թ.

Վայր – Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկ համայնք

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ – «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային ծրագրի»

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Հանրային իրազեկման հանդիպման օրակարգում դրված հարցերն են.

1. Ծրագրի նախագծի ներկայացում:
2. Հիմնադրամի կողմից ծրագրի իրականացման նպատակով վարձված մասնագետների ներկայացում:
3. Մեծ Մասրիկ համայնքում էլեկտրակայանի կառուցման վայրի, կազմակերպման և իրականացման ընթացքի, փուլերի ներկայացում:
4. Ծրագրի իրականացման շրջանակում հնարավոր բնապահպանական և սոցիալական հարցերի ու դրանց մեղմման ուղղված միջոցառումների քննարկում:
5. Բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
6. Հարց ու պատասխան:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

1. Ռուբեն Գեորգյան – «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր» ղեկավար
2. Արմեն Ասատրյան – համայնքի ղեկավար
3. Էդիկ Պողոսյան – համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավար
4. Սոնա Պողոսյան – վերաբնակեցման մասնագետ
5. Լիլիթ Դիլանյան – սոցիոլոգ, հանդիպման քարտուղար
6. համայնքի բնակիչներ, հետաքրքրված անձիք՝ 13 հոգի (13 տղամարդ):

Բովանդակություն

1. Հանդիպումը մեկնարկեց ծրագրի ղեկավար Ռ. Գեորգյանի խոսքով, ով ներկայացրեց Ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ այն հանդիսանում է պետական-մասնավոր գործընկերության ձեւաչափով իրականացվելիք Ծրագիր, որը նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջեւ 2015թ. ստորագրված համաձայնագրի շրջանակներում եւ հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2016թվ.-ի վերջին:

Ռ. Գեորգյանը նշեց, որ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում կառուցել Մասրիկ-1 46 ՄՎտ - 55 ՄՎտ միջակայքում դրվածքային հզորությամբ արեւային ֆոտովոլտային կայան, որի նպատակով հայտարարվել է էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման եւ շահագործման մրցույթ: Նախատեսվում է, որ մրցույթի արդյունքներով ընտրված ընկերությունը կսկսի աշխատանքները 2018թ. գարնանը:

Ռ. Գեորգյանը նաեւ շեշտեց, որ Ծրագրի իրականացման երկարաժամկետ արդյունքներն են՝ օտարերկրյա ներդրողների շրջանում Հայաստանի արեւային էներգետիկայի ոլորտի գրավչության մեծացումը, Հայաստանում էլեկտրաէներգիայի ռեսուրսների բազմազանեցումը, ՀՀ էներգետիկ անվտանգության ամրապնդումը: Նա հստակեցրեց, որ պետությունը կայանի կառուցման նպատակով գումար չի ներդնում, այլ ներդրում կատարող կազմակերպությունը, որը պետք է ընտրվի մրցույթի արդյունքում, ինքն է կառուցելու կայանը: Ռ. Գեորգյանն ասաց, որ կան 10 կազմակերպություններ, ովքեր հայտեր են ներկայացրել մրցույթին մասնակցելու

նպատակով, եւ կհաղթի այն կազմակերպությունը, որը կառաջարկի էլ. էներգիայի ամենացածր գինը:

Ռ. Գեորգյանն ասաց, որ Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունն է տվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամասը Հիմնադրամին նվիրաբերելու վերաբերյալ՝ էլեկտրակայանի կառուցման նպատակով, ինչն էլ արդեն փաստաթղթերով ամրագրված է:

Ծրագրի ղեկավարը ներկայացրեց նաեւ Ծրագրի սոցիալական ազդեցության գնահատման կարելիությունն ու անհրաժեշտությունը, եւ այն իրականացնող մասնագետներին, մասնավորապես վերաբնակեցման մասնագետ Ս. Պողոսյանին: Այնուհետեւ խոսքը հանձնեց Ս . Պողոսյանին, ով իր հերթին ներկայացրեց, թե ինչ գնահատման մասին է խոսքը ու առավել կարելիորեց այն փաստը, որ Համաշխարհային Բանկը (այսուհետ՝ ՀԲ) մեծ ուշադրություն է դարձնում Ծրագրի սոցիալական բաղադրիչին: Մասնագետն ասաց, որ պետք է հասկանալ Ծրագրի ազդեցությունը՝ թե՛ բացասական, թե՛ դրական, համայնքի՝ ընդհանուր առմամբ եւ մասնավորապես՝ տնային տնտեսությունների վրա: Ս. Պողոսյանն ասաց, որ քանի որ նվիրաբերված հողը իր նշանակությամբ արոտավայր է, եւ համայնքի որոշ բնակիչներ երբեմն օգտվում են դրանից՝ իրենց անասուններին արածեցնելով, ապա պետք է հասկանալ, թե հողի՝ տվյալ նպատակով օգտագործման անհնարինությունը հետագայում ինչ խնդիրներ կարող է առաջացնել: Մասնագետն ասաց, որ կիրականացվի համապատասխան ուսումնասիրություն, որի շրջանակներում կարիք կլինի նաեւ հարցազրույցներ իրականացնել անմիջական ազդեցությունը կրողների հետ: Կարիք կլինի նաեւ պարզելու, թե ինչ այլընտրանքներ կան, որոնք կարող են մեղմել Ծրագրի ազդեցությունը համայնքի ՏՏ վրա: Մասնագետը նշեց նաեւ, որ եթե ուսումնասիրության արդյունքում պարզվի, որ կա շատ մեծ բացասական ազդեցություն, ապա ՀԲ եւ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի համատեղ աշխատանքի արդյունքում կորոշվի, թե ինչ համապատասխան գործողությունների շրջանակ պետք է պլանավորել եւ իրականացնել: Ս. Պողոսյանը նաեւ մասնակիցներին տրամադրեց Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ՝ Ծրագրին ծանոթանալու նպատակով, ու հավելեց, որ բացի կայանի կառուցումից շինարարության ընթացքում նաեւ կայանին մոտեցման նպատակով ճանապարհ է կառուցվելու, լինելու են կրող հենասյուներ, լարանում է իրականացվելու, եւ միգուցե հետագայում այդ նպատակներից ելնելով հողօտարում արվի, կամ օրինակ ճանապարհի կառուցումն հարմար լինի իրականացնել որեւէ մեկին պատկանող այգու միջով, ինչի համար կտրամադրվի համապատասխան փոխհատուցում: Սակայն այս ամենը լինելու է հետագա փուլերի ընթացքում, իսկ համայնքի բնակիչների կողմից կարող են լինել բողոքներ կամ առաջարկություններ, որոնք պետք է գրանցվեն հատուկ համակարգում՝ բողոքների լուծման մեխանիզմում: Այս համակարգի միջոցով բնակիչները կարող են ներկայացնել իրենց խնդիրները եւ հասնակալ՝ ու՛մ դիմել եւ ի՞նչ անել:

Ապա Ս. Պողոսյանը ցանկացավ լսել համայնքի ներկայացուցիչների դիրքորոշումը Ծրագրի վերաբերյալ:

Համայնքի ներկայացուցիչները նշեցին, որ Ծրագիրը հետաքրքիր է, եւ ըստ նրանց բացասական երեւյթներ անպայման կլինեն, բայց դրանց կշիռը մեծ չի լինի, իսկ դրական ազդեցությունը շատ ավելի մեծ կլինի, եւ նման արդյունաբերական համայնք ստեղծելու հնարավորությունը ձեռքից բաց թողնելը սխալ կլինի: Մասնակիցները նշեցին, որ ունեն հեռագնա արոտավայրեր, սակայն

դրանք այնքան հեռու են, որ անասուններին տանելը խնդիր է դառնում, ինչպես նաև չկան համապատասխան պայմաններ՝ նախապանների կեցության համար, այսինքն չկա ճանապարհ, լույս, ջուր, կաթի մթերման կետ, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել աշխատանքը: Մասնակիցներից մեկը նաև կարիծք հայտնեց այն, մասին որ անասնապահությունն այնքան էլ եկամտաբեր չէ, եւ ուղորտում եղած խնդիրը մեկ արոտավայրով չի որոշվում: Նաև մասնակիցների կողմից շեշտվեց, որ նվիրաբերված արոտավայրը այնքան էլ խոտածածկ չէ, եւ սեզոնին շատ քիչ գլխաքանակով անասուններ են տարվում այդտեղ՝ արածեցնելու նպատակով:

Պ. Պողոսյանն իր հերթին նշեց, որ վյալ արոտավայրը հիմնականում օգտագործում են այն ընտանիքները, ովքեր ունեն ուրիշ եկամտի աղբյուր եւ պարզապես երբեմն տվյալ արոտում իրենց անասուններն արածեցնում են, այսպես ասած՝ հանում են մաքուր օդի, իսկ այն ընտանիքները, ում համար անասնապահությունը նաև եկամտի աղբյուր է հանդիսանում, տանում են այլ արոտավայրեր: Նա նաև նշեց, որ իր կարծիքով հեռագանա արոտավայրերում էլ. հոսանք ապահովելով հարցը չի լուծվի, քանի որ խնդիրն ավելի խորքային է, եւ կաթի մթերումը բարդ խնդիր է: Նա նշեց, որ իրենք չեն կարողանում կաթը, կաթնամթերքը եւ մսամթերքը վաճառել բարձր գնով, այլ դիմում են մշնորդներին, ովքեր ավելի ցածր գնով են վերցնում ապրանքները: Այսինքն խնդիրներն ավելի բարդ են, եւ միայն արոտավայրերի առկայությամբ չեն պայմանավորված:

Հանդիպումը շարունակվեց հարց ու պատասխանի տեսքով: Որոշ դեպքերում մասնակիցները արտահայտում էին իրենց կարծիքներն ու սպասումները ծրագրից, որոնք նույնպես ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 1. ՀԼ հարց ու պատասխան

#	Հարցեր	Պատասխանների ամփոփում, մասնակիցների կարծիք, նշումներ ու առաջարկներ
1	ԱԵԱ հարց1- Կայանի կառուցումը ենթադրու՞մ է նոր աշխատատեղերի ստեղծում:	Ռ. Գետրոյան – այո, բայց աշխատանքների 2 փուլ է նախատեսվում իրականացնել, եւ մոտավորապես ուղղակի 20 աշխատատեղ կստեղծվի ու կստեղծվեն նաև անուղղակի աշխատատեղեր: Նաև ուզում եմ ասել, որ կայանի կառուցմամբ գյուղը ճանաչելի կդառնա: Ու երկարաժամկետ հեռանկարում կարող է ավելի եկամտաբեր լինել այս Ծրագիրը:

#	Հարցեր	Պատասխանների ամփոփում, մասնակիցների կարծիք, նշումներ ու առաջարկներ
2	<p>ԱԵԱ կարծիք– ես ունեմ 2 կով, ուղղակի պահում եմ, բայց եթե ունենամ աշխատատեղ, կով չեմ պահի, ու 2 կով ավել կպահի նա, ում համար դա եկամտի աղբյուր է, որովհետեւ դա իրեն ձեռ կտա: Անասնապահությունը եկամտի հիմնական աղբյուր չի, ավելի կարելի է աշխատատեղը, դրանով գյուղը կզարգանա: Թե չէ 110-120 դրամով կաթ մթերելը օգուտ չի տալիս, դրա համար անասնապահության վրա կենտրոնանալ պետք չի:</p> <p>ԱԵԱ կարծիք – Երբ մարդը կով է պահում, համարում է իրեն ոչ գործազուրկ, բայց մեզ պետք է, որ գյուղը դառնա արդյունաբերական գյուղ, դրա համար բացասական երեւոյթների վրա պետք չէ ուշադրություն դարձնել, իսկ Ծրագրի դրական կողմերը ահռելի են:</p> <p>ԱԵԱ կարծիք – անասնապահությանը էս Ծրագիրը վնաս չի տալիս, ես կով շատ ունեմ, բայց կողմ եմ Ծրագրին, ես ուրիշ տեղ եմ անասուն պահում, գումար եմ տալիս արոտավայրի համար եւ արածեցնում եմ, նվիրաբերված արոտը 2 ամիս անգամ չի հերիքում անասունին:</p> <p>ԱԵԱ կարծիք - էդ հողը աղի է , բուսածածկույթը քիչ է, անասունին լրացուցիչ կեր ենք տալիս, որ հագենա, ուղղակի դուրս ենք հանում արոտ էլի:</p>	<p>Ս. Պողոսյան – Շնորհակալություն կարծիքների համար: Ցանկանում եմ նշել, որ մենք չենք անտեսի որևէ հնարավոր ազդեցություն: Մենք պարզապես պետք է հասկանանք, թե ինչ տեսակի ազդեցություն է Ծրագիրն ունենալու համայնքի վրա: Նաև, ուզում եմ նշել, որ համայնքը հողն է տրամադրում, իսկ ներդրողն էլ պարտավորվելու է համայնքին գումար հատկացնել՝ համայնքի զարգացման նպատակով:</p>
	<p>ԱԵԱ հարց 2. - հողը հատկացվում է:</p>	<p>Ս. Պողոսյան – ոչ, համայնքը հողը նվիրաբերում է, իսկ ներդնողը նվիրաբերելու է 80 մլն դրամ: Նաեւ վճարելու է գույքահարկի եւ հողի հարկի գումարները մոտավորապես 20 տարի, տարեկան 6 մլն դրամ:</p> <p>Ռ. Գետրգյան – այս շաբաթ այդ գործարքի համաձայնությունը կստանանք կառավարությունում, ու ակնկալում ենք, որ մարտի 7-ին արդեն կունենանք մրցույթի հաղթող, գումարը կփոխանցվի համայնքապետարանի համար եւ նոր հողը կնվիրաբերվի: Նույնիսկ եթե հողը հետագայում վերադարձվի համայնքին, գումարը հետ չի կարող վերցվել: Այսպիսին է պայմանավորվածությունը:</p>

#	Հարցեր	Պատասխանների ամփոփում, մասնակիցների կարծիք, նշումներ ու առաջարկներ
	<p>Ա.Ասատրյան (համայնքապետ) – Ա. Ասատրյան – մենք պլանավորում ենք համայնքի մանկապարտեզը վերանորոգել, ջրագիծ անցկացնել, ֆուտբոլի հրապարակ կառուցել, կոմբայն եւ այլ սարքեր գնել, որովհետեւ մեր ունեցածն արդեն մաշված է, նաեւ անհրաժեշտ է փողոցների լուսավորությունը ապահովել, ճանապարհներ կառուցել: Մի խոսքով, շատ խնդիրներ ունենք, որոնք պետք է լուծել: Ես էլ հարց տամ . համայնքն այդքան ներդրում է անում, իսկ ներդրողն ինչի՞ է պատրաստ:</p>	<p>Ս. Պողոսյան – Ինչպես նշվել է, ներդրողը տրամադրելու է 80 մլն դրամը որպես համայնքի զարգացման վճար: Եթե ներդրողն իր ցանկությամբ այլ ներդրումներ եւս ուզենա անել, կանի, բայց որեւէ այլ պարտադիր պայման մենք չունենք: Սակայն, երկարաժամկետ ներդրող է, 20 տարի այստեղ գործունեություն է ծավալելու, եւ ուզի-չուզի ինտեգրվելու է համայնքին, կարծում եմ: Ռ. Գետորդյան – Այո, որեւէ այլ պարտավորեցնող կետ չունենք, բայց մրցույթի բոլոր մասնակիցները լուրջ միջազգային կազմակերպություններ են:</p>
	<p>ԱԵԱ կարծիք –հաղթող կազմակերպությունը կարող է նաեւ հույս դնել տեղի աշխատուժի վրա: Մեր գյուղում լավ մասնագետներ շատ կան՝ էլեկտրիկներ, շինարարներ եւ այն, որ կարան աշխատեն ծրագրում, թեկուզ շինարարության փուլում: Սա նաեւ մեր երեխաների հետագա կրթության մասին մտածելու լավ առիթ է, արդեն կհասկանանք, թե ինչ մասնագիտություն է պետք մեր երեխաներին, որ գնան սովորեն ու գան աշխատեն մեր գյուղում:</p>	<p>Ս. Պողոսյան – Այո, իհարկե, Ներդրողը կարող է տեղական աշխատուժն օգտագործել, եթե համապատասխան մասնագետներ առկա լինեն:</p>
3	<p>ԱԵԱ հարց 3. - իսկ էկոլոգիայի առումով որեւէ բացասական ազդեցություն ունի՞:</p>	<p>Ռ. Գետորդյան – կունենար, եթե կայանը աշխատեր կոնցենտրացված էներգիայի սկզբունքով, բայց սա ֆոտովոլտային է, դրա պանելները տանիքներից չեն տարբերվում, դրանք ընկալում են էներգիայի 20%-ը, իսկ դրանց հովի տակ շատ լավ աճում են բույսերը, քանի որ ավելի խոնավ է լինում: Մենք հետազոտություն ունենք, որ էկո համակարգին վնաս չի տալիս այս տիպի կայանը: Մեղուներին էլ չի վնասում, աղմուկ, վիբրացիա, ռադիացիա չունի, թունավոր նյութեր չեն արտազատվում:</p>

«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մարիկ - 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր»

Masrik-1 Utility-scale solar photovoltaic power plant investment project in Armenia

ՀԱՆՐԱՅՈՒՆ ԻՐԱՔԵԿԱՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



PUBLIC CONSULTATION

Մասնակիցների ցուցակ/List of participants

Ամսաթիվ/Date 30.01.18թ.

Վայր/Place ԱՂՏ ԿԵՆՏՐՈՆ

N	Անուն, ազգանուն Name, Surname	Կարգավիճակ (համայնքի անդամ) / Status (community member, NGO representative etc.)	Հեռ., էլ. փոստ Tel/Email	Զբաղվումը անասնապահությամբ (այո/ոչ) / Engaged in cattle breeding (Yes/No)	Ստորագրություն Signature
1	Ալիկո Պեկեցյան	ԱԶԷԶ (ապրանք)	077440506	-	
2	Աննա Գրիգորյան	ԱԶԷԶ (վեր. Տեղակ. անդամ)	093 598 6 85	-	
3	Վահր Կրկունքյան	Կառավարության անդամ	098239555	-	
4	Պրոքուրյան Զրիկ	Կառավարության անդամ	093 78 7 3 4 4	-	
5	Յուր. Գրիգորյան	Վեր. Տեղակ. անդամ	093 873 893	-	
6	Կարապետյան Շեքոն	Վեր. Կարգավիճակ	078561568	-	
7	Ջուրիան Չևալիկ	Վեր. Կարգավիճակ	093 73 90 92	-	
8	Վահր Կրկունքյան	Վեր. Կարգավիճակ	098 55 35 15	-	
9	Սարգսյան Լուսինե	Վեր. Կարգավիճակ	098 04 03 09	-	
10	Պեկեցյան Գր. Կ	Վեր. Կարգավիճակ	094-69-95-76	-	
11	Արմինե Գևորգյան	Կառավարության անդամ	093 15 15 97	-	
12	Սարգսյան Մանուկ	Վեր. Կարգավիճակ	093 13 16 74	-	
13	Գրիգորյան Կարապետյան	Կառավարության անդամ	098 77-71-61	-	

N	Անուն, ազգանուն Name, Surname	Կարգավիճակ (համայնքի բնակիչ, ՀԿ ներկայացուցիչ և այլն) / Status (community member, NGO representative etc.)	Հեռ., էլ. փոստ Tel/Email	Զբաղմունքը անասնապահությամբ (այո/ոչ) / Engaged in cattle breeding (Yes/No)	Ատրուագրություն Signature
14	Կոչարյան Անիտա Յի	համայնքի բնակիչ	027 043454	Այո և կենտրոն	
15	Վարդանյան Արամ Տ	Կենտրոնի բնակիչ	093 63 63-33	Այո և կենտրոն	
16	Արթուրյան Գևորգյան	ԿԵՆ (Օրենքի 29)	094 402040	-	
17					
18					
19					
20					
21					
22					
23					
24					
25					
26					
27					
28					
29					
30					
31					

8.8 Հղումներ

ADB/MoTC (2010): Armenia: North-South Road Corridor Investment Program. Resettlement Policy Framework

ADB/Municipality of Yerevan (2010): Yerevan West Bypass Highways Project. Resettlement Action Plan.

Armenia Regional Development Program (ARDEP): Gegharkunik Regional Development Plan, 2006-08

CARMAC / Community Agricultural Resource Management and Competitiveness Project (2010): Environmental Management Plan, Nov 2010

CENN Caucasus Environmental NGO Network (2004): Assessment of Effectiveness of Environmental Impact Assessment (EIA) system in Armenia.

International Fund for Agricultural Development (IFAD) (2003): Country Strategic Opportunities Paper.

International Finance Corporation (IFC): Handbook for Preparing a Resettlement Action Plan

WB/HVEN (2013-2016): The RPF for OTL Reconstruction Project Hrazdan to Shinuhair Corridor, Armenia

Ministry of Nature Protection RA (MNP) (2009): Fourth National Report to the Convention on Biological Diversity.

REC Caucasus (2008): Regional Profiles of RA.

Spoor, M. (2004): UNDP ARMENIA WHITE PAPER LAND REFORM, RURAL POVERTY AND INEQUALITY: A PRO-POOR APPROACH TO LAND POLICIES, The Hague/Yerevan.

The International Bank for Reconstruction and Development / The World Bank (2004): Involuntary Resettlement Sourcebook. Planning and Implementation in Development Projects.

Wistrand, Birgitta / Mkhitarian, Armine (2007): Women empowerment and cooperation in Armenia with a focus on the Syunik region, Assssment report prepared for the OSCE Office, Yerevan.

World Bank (2010): Armenia Country Brief.

www.ifad.org (3/2011): Gender Profile Armenia.